AZG NEW PDF.qxd 17/05/2010 22:19 Page 1

Ազգ Azg

18 ՄԱՅԻՍ 2010 ԵՐԵՔՇԱԲԹԻ 90 (4470)

ISSN: 1829-1651

# 39 հազար շրջանավարտներ

Ինչպես տեղեկանում ենք ՀՀ կրթության եւ գիտության նախարարությունից՝ այս տարի հանրապետությունում ուսումնական տարվա վերջին օրը կլինի մայիսի 21-ը: Այդ օրը, ընդհանուր առմամբ, հանրակրթական հաստատությունները կավարտեն շուրջ 39 հազար շրջանավարտներ, որոնցից մոտ 38 հազարը՝ հանրակրթական միջնակարգ դպրոցները, 50-ը՝ երեկոյան, 40-ը՝ ներառական, 30-ը՝ երաժշտական, մոտ 150-ը՝ հատուկ դպրոցները, եւ 350-ը՝ մասնագիտական հանրակրթական քոլեջներն ու վարժարանները:

Կրթության եւ գիտության նախարարությունը հիշեցնում է ուսումնական հաստատություններին, որ դպրոցական ավարտական վերջին օրը անհրաժեշտ է նշել դպրոցին վայել հանդիսավորության շրջանում (ի դեպ, կարելի է նույնիսկ խրախուսել այն դպրոցներին, որոնք կհետեւեն այս տրամաբանական հորդորին-Հ. Ա.):

**Հ. Ա.**

# Թուրքիայի ու Ադրբեջանի «ԼՂ նոր պլանը»

**Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**



Ադրբեջանն ու Թուրքիան համառորեն բարձրաձայնում են այն տեսակետը, թե ղարաբաղյան հակամարտության կարգավորման հարցում Ղարաբաղի հարակից շրջաններից առնվազն երկուսի վերադարձն արդեն իսկ քննարկման փուլում է, ընդ որում, եթե Ադրբեջանը դրանում իր դիրքորոշման ամրագրումն է տեսնում, Թուրքիան, ամենայն հավանականությամբ, իր գնահատականով, հայ-թուրքական գործընթացում «առեւտուր» անելու նկրտումներ ունի, այն էլ՝ այդ շրջանների հաշվին:

Թուրքիայի վարչապետ Ռեջեփ Թայիփ Էրդողանը երեկ Բաքվում էր ու, թուրքական «Հյուրիեթի» համաձայն, Էրդողանի այցի օրակարգում լինելու է Ղարաբաղին հարակից յոթ շրջաններից երկուսի հանձնման խնդիրը: Ըստ թուրքական թերթի, ենթադրվում է, որ հանձնման ենթակա Քելբաջարն ու Ֆիզուլին են: Ավելին, ըստ թերթի, Էրդողանն իր հետ Բաքու է տարել ղարաբաղյան հիմնահարցի կարգավորման «նոր պլան»:

Ըստ այդմ, իբր երկու շրջաններ «վերադարձվելուց հետո» Ադրբեջանը կարող է բացել սահմանը Հայաստանի հետ: Թուրքական աղբյուրները նշում են, թե իբր նման համաձայնություն է ձեռք բերվել ԱՄՆ նախագահի՝ Հայաստանի եւ Թուրքիայի ղեկավարների հետ հանդիպումներում եւ Ռուսաստանի նախագահի՝ Թուրքիա այցելության ժամանակ: Էրդողանը «նոր պլանի» պոչին նաեւ «ճանապարհային նոր քարտեզ» է իր հետ իբր տարել Ադրբեջան, որով էլ վարում է իր «լուռ դիվանագիտությունը»:

Հասկանալի է, որ Ադրբեջանն ու Թուրքիան քննարկման ինչ թեմայից էլ սկսեն, հաստատապես անդրադառնալու են ղարաբաղյան հարցին: Սակայն այն, որ թուրքական լրատվամիջոցներն արդեն իսկ օրակարգային են նշում ԼՂ հարցը, հետն էլ՝ «նոր պլան» ու «նոր ճանապարհային քարտեզ», թերեւս հավանական է դարձնում, որ այցը ղարաբաղյան հակամարտության առնչությամբ խիստ կարեւոր նշանակություն է ունենալու:

*Տես էջ 2*

**ՀԱՆԿԱՐԾԱՄԱՀ**

# Հոկտեմբերի 27-ի գործով մեկ դատապարտյալ էլ մահացավ

**ՀՀ արդարադատության նախարարության «Նուբարաշեն» քրեակատարողական հիմնարկում մայիսի 15-ին, երեկոյան, դեռեւս չպարզված հանգամանքներում հանկարծամահ է եղել ՀՀ քրեական օրենսգրքի հինգ տարբեր հոդվածների հատկանիշներով 14 տարի ազատազրկման դատապարտված Համլետ Ստեփանյանը: Վերջինս 1999 թ. հոկտեմբերի 27-ին Ազգային ժողովում տեղի ունեցած արյունալի ահաբեկչության գործով անցնող դատապարտյալ էր:**

**«Ազգը» փորձեց մանրամասներին տեղեկանալ արդարադատության նախարարության քրեակատարողական վարչության մամուլի խոսնակ Արսեն Բաբայանից. «Դիակի նախնական զննությամբ բռնության հետքեր չեն հայտնաբերվել: Նշանակվել է դատաբժշկական փորձաքննություն: Մահվան հանգամանքները պարզելու ուղղությամբ տարվում է քննություն»:**

**Հիշեցնենք, որ 2003 թ. դեկտեմբերի 2-ի դատավճռով Երեւանի Կենտրոն եւ Նորք-Մարաշ համայնքների 1-ին ատյանի դատարանը ցմահ ազատազրկման դատապարտեց Նաիրի Հունանյանին եւ նրա հանցախմբի 5 անդամներին, հանցախմբի անդամ Համլետ Ստեփանյանը, որը անմիջականորեն չէր մասնակցել ԱԺ նիստերի դահլիճում տեղի ունեցած ոճրագործությանը, դատապարտվեց 14 տարի ազատազրկման:**

**Հետաքրքրական է, թե ինչը կարող էր պատճառ դառնալ նրա մահվանը: Հիշեցնենք, որ նույն գործով ցմահ ազատազրկված Վռամ Գալստյանը ինքնասպանություն էր գործել բանտախցում դեռեւս 2004-ին:**

**Ս. Ս.**

# Հայաստանի եւ Բելառուսի գիտությունների ակադեմիաները կհամագործակցեն



**Երեկ երկու երկրների ակադեմիաների միջեւ ստորագրվեց համագործակցության պայմանագիր: Փաստաթուղթը ստորագրել են ՀՀ ԳԱԱ նախագահ Ռադիկ Մարտիրոսյանն ու Բելառուսի ԳԱԱ նախագահության նախագահ Միխայիլ Մյասնիկովիչը: Շեշտելով, որ հայ-բելառուսական գիտական կապերը լուրջ պատմություն ունեն՝ Ռադիկ Մարտիրոսյանը նշեց, որ այժմ համագործակցությունը «նոր կարգավիճակ եւ մոտեցումներ է պահանջում»: Հայկական կողմը, պայմանագրի համաձայն, հնարավորություն կստանա ծանոթանալու Բելառուսի տեղեկատվական տեխնոլոգիաներին, տիեզերքի հետազոտությունների բնագավառին, իսկ բելառուսական կողմին առավել հետաքրքրում են Հայաստանի գիտական նվաճումները հնագիտության, ատոմային էներգիայի եւ նյութաբանության ոլորտներում:**

**Հ. Ա.**

# Վանի Սուրբ Խաչում մատուցվելիք պատարագը հետաձգվել է

**Ինչպես արդեն գիտեն մեր թերթի ընթերցողները, այս տարվա սեպտեմբերի 12-ին Վանա լճի Աղթամար կղզու Սուրբ Խաչ եկեղեցում նախատեսված էր անցկացնել պատարագ, որին մասնակցելու համար թուրքական կողմը հրավիրել էր նաեւ հայաստանցիների: Սակայն նույն օրը՝ սեպտեմբերի 12-ին, Թուրքիայում նախատեսված է անցկացնել համաժողովրդական հանրաքվե սահմանադրական բարեփոխումների կապակցությամբ: Այս պատճառով Վանի կուսակալ Մյունիր Քարալօղլուն հեռախոսազրույց է ունեցել Պոլսո հայոց պատրիարքարանի տեղապահ Արամ արք. Աթեշյանի հետ եւ առաջարկել է պատարագը մեկ շաբաթով հետաձգել: Ինչպես նշում է CNNTurk-ը, հայկական կողմը համաձայնել է, որի համար էլ թուրքական իշխանությունները շնորհակալություն են հայտնել:**

**Հավելենք նաեւ, որ 2007-ին վերանորոգվելուց հետո Սուրբ Խաչը գործում է իբրեւ թանգարան, եւ մինչեւ այսօր եկեղեցու գմբեթը խաչազուրկ է:**

**Հ. Ա.**

# Հերքում՝ մեկնաբանության լուսանցքով

**Երեկ Սամվել Բաբայանի մամուլի գրասենյակը հերքում էր մի բան, որը վերջին օրերին լրատվամիջոցների թոփ թեմաների թվում էր: Հերքումը նախ վերաբերում է նրան, թե վերջին օրերին տեղեկություններ են տարածվում, որ Ս. Բաբայանը նշանակվելու է Հայաստանի պաշտպանության նախարար, եւ սա Ռոբերտ Քոչարյան-Սերժ Սարգսյան հակադրության համատեքստում է. «Ցանկանում ենք մեկ անգամ եւս նշել, որ եթե Սամվել Բաբայանը որոշի ակտիվ քաղաքականությամբ զբաղվել, ապա դա կանի հրապարակավ՝ դա չկապելով այլոց հարաբերությունների ու ծրագրերի հետ»: Սակայն հետաքրքրական այդ հայտարարության հետագա ձեւակերպումն է. «Ինչ վերաբերում է պաշտպանության նախարար դառնալուն, ապա Բաբայանը որեւէ պաշտոնի երբեք չի ձգտել եւ չի ձգտում: Նախկինում իր զբաղեցրած բոլոր պաշտոնները Բաբայանը ստացել է արտակարգ իրավիճակների ժամանակ եւ անհրաժեշտության թելադրանքով»: Ասել է թե նոր արտակարգ իրավիճակո՞ւմ էլ...**

**Ս. Բաբայանը չի հերքել, որ վերջերս եղել է Իրանում (մամուլում ասվում էր, որ այնտեղ բարձրաստիճան զինվորականության հետ է հանդիպել): Սամվել Բաբայանի գրասենյակն ընդամենը ճշտում է, որ այցն Իրանի Իսլամական Հանրապետություն մասնավոր բնույթ է կրել:**

**Ս. Խ.**

# Օվալաձեւ դահլիճ որ ունենանք, կոճակսեղմոցի էլ չի՞լինի

**ՄԱՐԻԵՏԱ ԽԱՉԱՏՐՅԱՆ**



Ազգային ժողովի երեկվա նիստը կառավարության նիստերի դահլիճում էր, այսինքն՝ այս շաբաթ կառավարությունն ու Ազգային ժողովը համահունչ աշխատելու են Մելիք Ադամյան-2-ում, քանի որ ԱԺ շենքը մինչեւ սեպտեմբեր նորոգվելու է, նիստերի դահլիճը, քոռանամ, դառնալու է օվալաձեւ, որ մեր ազգընտիրներն ավելի արդյունավետ աշխատեն եւ միայն կոճակ չսեղմեն, իսկ օվալաձեւ դահլիճն էլ, էս ճգնաժամոտ մաջալին ազգիս վրա նստելու է 390 մլն դրամ: Անզեն աչքով էլ տեսանելի է, պատգամավորներն իրենց տեղում չէին զգում իրենց՝ առանձնասենյակները, կոմֆորտը, գործավարուհիները, առանձնասենյակների սուրճը մնացել էր Ազգային ժողովում, իրենք՝ Մելիք-Ադամյանի առանց ակուստիկա, առանց նորմալ սեղանների, մի բուֆետ ու, մի լոժա ունեցող դահլիճում: Ասենք, որ այս դեպքում էլ, ինչպես մի շարք ուրիշ դեպքերում, ՀՀԿ-ի բախտն էր բերել, որովհետեւ ՀՀԿ-ական պատգամավորների էլիտար մասը, ով ազատ ելումուտ ունի ՀՀԿ կենտրոնական գրասենյակ, շուտ-շուտ մտնում էր ՀՀԿ, սրճում, հանգստանում-հետ գալիս: ՀՅԴ-ն նույնպես նույն կերպ էր վարվում՝ մի գլուխ դնելու տեղ մոտակա ՀՅԴ ԳՄ շենքում խմբակցության անդամների համար հաստատ կգտնվեր:

Չնայած Մելիք-Ադամյանում երկու հեռուստացույց էր տեղադրվել՝ մեկը միջանցքում, մեկը ԱԺ նիստը վարողների հարթակին մերձ, սակայն լրագրողները եւս դեռ լավ չէին կողմնորոշվում, դահլիճի դիմաց խռնվել էին, քանի որ անակուստիկ դահլիճում աշխատելն ու նիստին հետեւելը մի փոքր ծանր էր, ահա նրանք էլ թեմա հորինեցին՝ պատգամավորներից հետաքրքրվել, թե ի՞նչ զգացողությամբ են այս շենքում աշխատում, որտեղ, ի դեպ, Հայաստանի երրորդ հանրապետության առաջին պառլամենտը՝ Գերագույն խորհուրդն էր գործում, իսկ ներկայիս Ազգային ժողովի պատգամավորներից Վլադիմիր Բադալյանը, Վիկտոր Դալլաքյանը, Տիգրան Թորոսյանը, Ռաֆիկ Պետրոսյանը նաեւ այդ ԳԽ-ի պատգամավոր էին եղել եւ լրագրողներին օգնեցին նոստալգիկ ինչ-որ մթնոլորտ մի պահ առաջացնել: Անգամ ընկան նոստալգիկ հիշողությունների մեջ, թե ո՞վ, ե՞րբ, ո՞ր խոսափողն էր գրկել, ով խոսափողը մի վայրկյան չէր զիջում ուրիշի: Ընդհանուր առմամբ՝ կարծես առաջին օրն աշխատանքն այնքան էլ չէր ստացվում:

*Տես էջ 3*

AZG NEW PDF.qxd 17/05/2010 22:13 Page 1



# Չեխ վարչապետը մտածված գործելու կոչ է անում, որ պատերազմ չսկսվի

Չեխիայի վարչապետ Յան Ֆիշերը Հայաստանում է: Երկօրյա այցելությունը սկսվել է երեկ: Պաշտոնական տեղեկատվության համաձայն, երկօրյա աշխատանքային այցով Հայաստան ժամանած Յան Ֆիշերը կմասնակցի Հայ-չեխական բիզնես ֆորումին, հանդիպումներ կունենա Հայաստանի նախագահ Սերժ Սարգսյանի, Ամենայն հայոց կաթողիկոս Գարեգին Երկրորդի, ԱԺ նախագահ Հովիկ Աբրահամյանի եւ վարչապետ Տիգրան Սարգսյանի հետ: Ֆիշերը կայցելի Ծիծեռնակաբերդ, ծաղկեպսակ կդնի Հայոց ցեղասպանության զոհերի հուշարձանին:



Հայաստանի վարչապետ **Տիգրան Սարգսյանի** եւ Չեխիայի վարչապետ **Յան Ֆիշերի** երեկվա հանդիպմանը քննարկվել է նաեւ Ղարաբաղի հարցը: «Ես համոզված եմ եւ մեկ անգամ եւս պնդում եմ, որ Ղարաբաղի հարցը պետք է լուծվի Մինսկի խմբի շրջանակում», Երեւանում ասել է չեխ վարչապետը: Ըստ նրա, այս հարցում Հայաստանը պետք է լինի շատ հավասարակշռված:

«Ամեն ինչ պետք է լուծվի դիվանագիտորեն մտածված, որպեսզի չհանգեցնի պատերազմի, որպեսզի ոչ մի կողմ չտուժի», հավելել է Չեխիայի կառավարության ղեկավարը, նշելով, որ Հայաստանը ճիշտ ճանապարհին է:

Թերեւս տեղին է չեխ պաշտոնյային հիշեցնելը, որ ոչ վաղ անցյալում, ընդամենը մի քանի օր առաջ Բաքվում արած կրկին «չեխական» հայտարարություններում բնավ էլ հավասարակշռվածության դիրքերից չեն խոսել: Չեխիայի ԱԳ նախարարն Ադրբեջան այցելությանը, հերիք չէ իր, նաեւ Եվրոմիության անունից աջակցություն էր հայտնել ԼՂ հարցի խաղաղ կարգավորման բանակցային գործընթացին:

Չեխ դիվանագետը չէր մոռացել ավելացնել, թե Մադրիդյան սկզբունքներում արտացոլված է տարածքային ամբողջականության սկզբունքը: Չեխ արտգործնախարարը թերեւս դժվարացել էր խոսել Մադրիդյան փաստաթղթի ինքնորոշման իրավունքի եւ ուժ կամ ուժի սպառնալիք չկիրառելու սկզբունքների մասին, որի առնչությամբ երեկ Երեւան հասած չեխ վարչապետն էլ շեշտել է դիվանագիտորեն մտածված հարցը լուծելու կարեւորությունը, որ «պատերազմի չհանգեցնի վիճակը»:

**Ա. Հ.**

# Պրահայում քննարկվեցին հայ-չեխական կապերը

Մինչ չեխ արտգործնախարարը Բաքվում հանդիսավորապես բացեց Ադրբեջանում Չեխիայի դեսպանությունը, իսկ երկուշաբթի Չեխիայի վարչապետը գործարարների խմբով ժամանեց Երեւան, անցած շաբաթավերջին Պրահայում Չեխիայի Սենատի եւ Պատգամավորների պալատի ղեկավարության հետ պաշտոնական հանդիպումներ ունեցավ ՀՀ Ազգային ժողովի պատվիրակությունը ՝ փոխնախագահ **Սամվել Նիկոյանի** գլխավորությամբ: Պատվիրակության կազմում էին նաեւ արտաքին հարաբերությունների հանձնաժողովի նախագահ Արմեն Ռուստամյանը եւ պատգամավոր Լյովա Խաչատրյանը: Ինչպես մեզ հետ զրույցում նշեց պարոն Նիկոյանը, թեեւ իրենց այցը նախորդեց Չեխիայում խորհրդարանական ընտրություններին, սակայն շատ կարեւոր էր լրատվության փոխանակման եւ հայկական կողմի տեսակետները ճշգրիտ ներկայացնելու հարցում:

«Մի բան պարզ է, որ Չեխիայում Հայաստանի դեսպանության բացակայությունը բացասաբար է անդրադարձել հայ-չեխական հարաբերությունների զարգացման վրա, իսկ Ադրբեջանը՝ ունենալով դեսպանություն, շատ ակտիվ գործողություններ է ձեռնարկել», ասաց նա: Նրա կարծիքով, ակնհայտ է, որ Չեխիան Եվրոմիությունում ունի իր ուրույն տեղը, եւ չի կարելի թույլ տալ, որ Ադրբեջանը Չեխիայում միակողմանիորեն իրագործի իր ցանկությունը:

Պարոն Նիկոյանը նշեց, որ հանդիպումների ընթացքում նաեւ մտահոգություն են հայտնել Չեխիայի փոխվարչապետ, արտգործնախարար Յան Կոհոուտի Բաքվում արված միակողմանի հայտարարությունների առնչությամբ: Հայաստանի Ազգային ժողովի փոխնախագահը չեխական կողմին ներկայացրել է ղարաբաղյան հիմնահարցի, հայ-թուրքական հարաբերությունների եւ Ցեղասպանության ճանաչման գործընթացի հետ կապված հարցերը: Խորհրդարանական դիվանագիտության դրական արդյունքը հայկական կողմը նկատել է արդեն իսկ հանդիպումների ավարտին:

**Հ. Ա.**
**Պրահա**

# Android սմարթֆոնները «Վիվասել-ՄՏՍ»-ի սպասարկման կենտրոններում են

*Դրանք արտադրող HTC ընկերությունը փաստում է Հայաստանում «Վիվասել-ՄՏՍ»-ի գործընկեր լինելը*

**HTC ընկերության Android սմարթֆոնները կսկսվեն վաճառվել «Վիվասել-ՄՏՍ»-ի բոլոր սպասարկման կենտրոններում եւ կունենան HTC-ի 1 տարվա երաշխիքային սպասարկում: Այս առթիվ երեկ մամուլի ասուլիս էին հրավիրել «Վիվասել-ՄՏՍ»-ի գրասենյակում ընկերության գլխավոր տնօրեն Ռալֆ Յիրիկյանն ու HTC ընկերության Ռուսաստանի եւ ԱՊՀ տարածաշրջանային ղեկավար Անդրեյ Կորմիլցեւը:**



**Ռալֆ Յիրիկյանը տեղեկացրեց, որ ընկերության սպասարկման կենտրոններում վաճառվելու են «Թաթու» եւ «Հիրո» մոդելների սմարթֆոնները, որոնցից առաջինն արժենալու է 135 հազար դրամ, երկրորդը՝ 195 հազար դրամ: Հետագայում վաճառքում լինելու են նաեւ այլ մոդելներ: «Վիվասել-ՄՏՍ»-ի գլխավոր տնօրենը խոստացավ, որ այս ամառն ու աշունը «տաք են լինելու», եւ բացի սմարթֆոնների նոր տեսականուց, ընկերությունն առաջարկելու է նոր ծառայություններ, ընդլայնելու է իր ցանցը: Նրա տեղակացմամբ, այսօր արդեն «Վիվասելի» ցանցով տվյալների փոխանակման՝ ինտերնետի ծառայություններից օգտվում են 800 հազար բաժանորդներ, իսկ թրաֆիկի օգտագործման ծավալները նախորդ տարվա համեմատ ավելացել են 6-7 անգամ: Վերադառնալով Android-ներին, Ռալֆ Յիրիկյանը հայտնեց, որ ընկերությունը դրանք ազատ վաճառելու է, եւ այդ հեռախոսներից կարող են օգտվել նաեւ այլ բջջային օպերատորների բաժանորդները:**

**HTC-ի ներկայացուցիչ Անդրեյ Կորմիլցեւը նախ անդրադարձավ ընկերության եւ նրա արտադրած սմարթֆոնների ստեղծման պատմությանը: Նա հայտնեց, որ HTC-ն ստեղծվել է 1997-ին Թայվանում մի խումբ էնտուզիազիստների կողմից, որոնք մտածում էին, որ համակարգիչը ծանր է եւ անհնար է, որ մարդ իր հետ տանի, ու հարկ է ստեղծել սարքավորում, որը նրան կփոխարինի: Այդ նպատակով էլ ստեղծվեցին սմարթֆոնները, որոնց ստեղծմանը մասնակցել են «Մայքրոսոֆտի» եւ «Գուգլի» մասնագետները: Ինչ վերաբերում է կոնկրետ Android-ներին, ապա բացի բջջային կապից, դրանք առաջարկում են բազմաթիվ այլ ծառայություններ:**

**Հարցին, թե ինչպե՞ս է մեկնաբանում «Օրանժի» հայտարարությունը Հայաստանում սմարթֆոնների վաճառքի մասին, Անդրեյ Կորմիլցեւը պատասխանեց, որ գլոբալ առումով «Օրանժը» նույնպես իրենց գործընկերն է, բայց Հայաստանում HTC-ի ռազմավարական գործընկերը «Վիվասել-ՄՏՍ»-ն է:**

**ԱՐԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ**

***ՄԵՐՁԴՆԵՍՏՐ***

# Էռնես Վարդանյանին փրկելու ցանկությամբ դիմում Մեծ ութնյակին

**Մերձդնեստրում լրտեսության եւ հայրենիքի դավաճանության մեղադրանքներով կալանավորված հայազգի լրագրող Էռնես Վարդանյանի մայրը՝ Թամարա Շաղոյանը օգնության խնդրանքով բաց նամակ է հղել Մեծ ութնյակի երկրների ղեկավարներին:**

**«Մերձդնեստրի իշխանությունների կողմից Էռնես Վարդանյանի ձերբակալությունը կատարվել է շինծու մեղադրանքով: Էռնես Վարդանյանը, լինելով անկախ լրագրող, չէր կարող տիրապետել ռազմական, պետական եւ օրենքով պահպանվող գաղտնիքի, նա չէր աշխատում պետական կառույցում», «Ազատության» փոխանցմամբ, ասել է Թամարա Շաղոյանը Ռուսաստանի, ԱՄՆ-ի, Ֆրանսիայի նախագահներին, Գերմանիայի կանցլերին, Մեծ Բրիտանիայի, Ճապոնիայի, Իտալիայի եւ Կանադայի վարչապետներին հղած բաց նամակում՝ ներկայացնելով որդու գործի հետ կապված մանրամասները եւ զարգացումները:**

**«Վերջին հույսով եւ հավատով՝ դիմում եմ Ձեզ օգնության խնդրանքով: Խնդրում եմ Ձեզ՝ աշխարհի առաջատար տերությունների ղեկավարներին, գործուն միջոցներ ձեռնարկել որդուս նկատմամբ արդարությունը վերականգնելու եւ նրան անհապաղ ազատ արձակելու ուղղությամբ», գրում է հայազգի լրագրողի մայրը:**

**Ծնունդով գյումրեցի 30-ամյա Էռնես Վարդանյանը անազատության մեջ է ապրիլի 7-ից: Վարդանյանի ձերբակալությունը դատապարտել են միջազգային տարբեր լրագրողական ու իրավապաշտպան կազմակերպություններ եւ Մերձդնեստրի իշխանություններից պահանջել ազատ արձակել լրագրողին, սակայն մերձդնեստրյան իշխանություններն այս առումով ոչինչ չեն ցանկանում ձեռնարկել:**

**Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

# Վախճանվել է Էդ. Նալբանդյանի մայրը



**Շաբաթ երեկոյան, կյանքի 84-րդ տարեդարձի օրը, վախճանվել է Հայաստանի արտգործնախարար Էդվարդ Նալբանդյանի մայրը՝ Վարդանուշ Հախումյան-Նալբանդյանը:**

**Այրիանալով երիտասարդ հասակում, տիկին Վարդանուշը ոչ միայն հավատարիմ մնաց ամուսնու հիշատակին (նախարարի հայրը՝ Մեծ հայրենականի մասնակից Աղվան Նալբանդյանը (1915-1969) երկար տարիներ ղեկավար աշխատանքներ է վարել Հրազդանի շրջանում, երկու գումարում ընտրվել Հայկական ԽՍՀ Գերագույն խորհրդի պատգամավոր), այլեւ կարողացավ արժանավոր ձեւով մեծացնել իր չորս զավակներին, նրանց շրջապատելով ջերմ ծնողական ուշադրությամբ ու հոգատարությամբ, տալով պատշաճ կրթություն ու փայլուն դաստիարակություն:**

**Մեր ցավակցությունները Նալբանդյան սգակիր ընտանիքին:**

**Արտգործնախարարի մոր հուղարկավորությունը տեղի կունենա այսօր ժամը 14-ին Կոնդի Սուրբ Հովհաննես Մկրտիչ եկեղեցուց (Երեւան, Կոզեռնի փողոց, 15):**

# Թուրքիայի ու Ադրբեջանի «ԼՂ նոր պլանը»

*1-ին էջից*

Երեկ երեկոյան Բաքու ժամանումից անմիջապես հետո Թուրքիայի վարչապետը հանդիպեց Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիեւի հետ: Ենթադրվում է, որ Ալիեւի հետ Էրդողանի հանդիպմանը, բացի Ղարաբաղի հիմնահարցից, քննարկվել են նաեւ Հայաստան-Թուրքիա հարաբերությունները:

Ամեն դեպքում, ամենից կարեւոր հանգամանք պաշտոնապես նշվում է Ադրբեջան-Թուրքիա գազային համաձայնագրի ստորագրումը: Օրակարգային են նշվում նաեւ վիզային ռեժիմի վերացման, «Կովկասում կայունության հեռանկարների» հարցերը՝ ի շարս հայ-թուրքականի եւ ղարաբաղյանի: Միաժամանակ, Էրդողանը Ալիեւի հետ բացել է Ադրբեջանում Թուրքիայի դեսպանատան դիմաց կառուցված Աթաթուրքի արձանը, որ երկու երկրների «եղբայրության» հերթական վկայությունն է: Ի դեպ, Ադրբեջանից Թուրքիայի վարչապետը կմեկնի Վրաստան: Իսկ Ադրբեջան այցն էլ մեկ օրով ուշացել էր Էրդողանի՝ Իրան մեկնելու անսպասելի որոշման պատճառով:

Ամեն դեպքում, մի տեսակ տպավորություն է ստեղծվում, թե կան ինչ-որ գործընթացներ, որոնց մասին Հայաստանում լռում են, քանի որ վերջին ադրբեջանական հրապարակումներին հայկական կողմի արձագանքները, մեղմ ասած, հստակ չեն եղել: Որեւէ տարբերակով հստակորեն չի ասվել, որ ադրբեջանական ու թուրքական հայտարարությունները որեւէ կերպ իրականություն չեն, իսկ ԵԱՀԿ Մինսկի խումբն էլ որեւէ կերպ չի անդրադառնում գործընթացից դուրս հենց Ադրբեջանի նախաձեռնություններին, որին վերջին շրջանում ամենայն ակտիվությամբ աջակցում է «փոքր եղբոր» մեծ «խորհրդատուն»:

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակութեան ԺԹ տարի

Հիմնադիր եւ հրատարակիչ
**«ԱԶԳ ՕՐԱԹԵՐԹ» ՍՊԸ**
Երեւան 0010, Հանրապետութեան 47
ֆաքս 374 10 562863
e-mail: azg@azg.am
azg2@arminco.com
**www.azg.am**

Գլխաւոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՒԵՏԻՔԵԱՆ / հեռ 521635

Խմբագիր
ՊԱՐՈՅՐ ՅԱԿՈԲԵԱՆ / հեռ 529221

Հաշուապահութիւն (գովազդ) / հեռ 582960

Լրագրողների սենեակ / հեռ 581841

Համակարգչ. ծառայութիւն / հեռ 582483

***Շուրջօրեայ լրահաւաք ծառայութիւն*** / հեռ 529353

Համակարգչային շարուածքը «Ազգ» թերթի

Թերթի նիւթերի ամբողջական թէ մասնակի արտատպումները տպագիր մամուլի միջոցով, ռադիոհեռուստատեսութեամբ կամ համացանցով, առանց խմբագրութեան գրաւոր համաձայնութեան խստիւ արգելւում են համաձայն ՀՀ հեղինակային իրաւունքի մասին օրէնքի:
Նիւթերը չեն գրախօսւում ու չեն վերադարձւում:
Գ տառով յօդուածները գովազդային են, որոնց բովանդակութեան համար խմբագրութիւնը պատասխանատւութիւն չի կրում:

"AZG" Daily NEWSPAPER
Editor-in-chief
H.AVEDIKIAN / phone: 374 10 521635
47 Hanrapetoutian st.,
Yerevan, Armenia, 0010

AZG NEW PDF.qxd 17/05/2010 22:05 Page 1



# Կառուցվող օդանավակայան, շինարարական խանութների շարք, բայց անմշակ հողատարածքներ

Շինարարության ակտիվացումը նշանակում է մի քանի բան. օրինակ, որ տվյալ երկրում կա այն բնակելի շենքերի, գրասենյակների, հիմնարկների կարիքը, որոնք կառուցվում են, եւ հետո՝ ժողովուրդն ունի մեծ հավատ իր երկրի ապագայի, մեծ վստահություն իր վաղվա օրվա հանդեպ: ԼՂՀ այցելության ընթացքում Ստեփանակերտի փողոցներում շինարարական խանութները, կիսակառույց եւ նորակառույց (ոչ միայն փլուզված) շենքերը գրեթե ամեն քայլափոխի էին: Անշուշտ, Արցախում անցկացրած մեկ օրը լրիվ բավարար չէր ավելի մանրամասն տեղեկանալու ԼՂՀ-ում շինարարության տեմպերին, սակայն միայն վերոհիշյալի առկայությունն ապացուցում է, որ Ղարաբաղում շինարարության բնագավառը բավական ակտիվ զարգացումներ ունի: «Մասնագիտությամբ շինարար եմ, անցած տարիներին, համարյա միշտ, մեկնում էի Ռուսաստան, բայց հիմա որոշեցի մնալ հայրենիքում, այստեղ էլ արդեն, նկատում եմ, լավ շինարարների կարիքը կա, բացի այդ, Ռուսաստանում արդեն նկատվում է որոշակի խստացում միգրանտների նկատմամբ», մեր զրույցում ասաց շինարար **Սուրենը**:

Իսկ Ստեփանակերտի շինարարական խանութներից մեկում տիկին **Լուսինեն,** որի ամուսինը զոհվել է ղարաբաղյան պատերազմում, մեզ ասաց, որ այժմ տունն է վերանորոգում. «Խանութից հենց որոշ շինարարական ապրանք եմ գնում: Մի աղջիկ ունեմ: Որոշ գումար էի խնայել ու հիմա տունս եմ որոշել մի քիչ կարգի բերել», ասաց տիկին Լուսինեն: Իսկ մեր հարցին, թե որքա՞ն եք մտահոգված Արցախի՝ «հակամարտության տարածք» լինելով, տիկինը պատասխանեց. «Իսկ ո՞վ ասաց, որ Ղարաբաղը հակամարտության տարածք է, Ղարաբաղն անկախ պետություն է՝ շնորհիվ մեր հերոս զինվորների, որոնք կռվել են երեկ եւ որոնք ամուր են պահում մեր սահմանն այսօր»:

Այս տարվա հոկտեմբերի 16-ին Ստեփանակերտի կառուցվող օդանավակայանը կիրականացնի իր առաջին թռիչքը: Նախատեսված է, որ թռիչքներ կիրականացվեն բացառապես դեպի Երեւան եւ հակառակ ուղղություններով: Սա, անշուշտ, եւս «մի թելով» կկապի Արցախը՝ Հայաստանին եւ կմոտեցնի այն օրը, երբ Ստեփանակերտից հնարավոր կլինի իրականացնել նաեւ միջազգային թռիչքներ, ինչո՞ւ ոչ՝ նաեւ դեպի հարեւան պետության մայրաքաղաք Բաքու:

Արցախում մենք տեսանք նաեւ մի շարք անմշակ հողատարածքներ, որոնք պիտանի են ինչպես հողագործության, այնպես էլ անասնապահության համար: Այդ տարածքներում, սակայն, չի իրականացվում ոչ առաջինը, ոչ երկրորդը: Ժամանակի առումով կրկին մեզ չհաջողվեց պարզել սրա արմատական պատճառները, սակայն որոշ քաղաքացիների հետ զրույցում որոշ պատճառներ, այնուամենայնիվ, հասկանալի դարձան: Այն, ինչ ասում է Րաֆֆին «Սամվել»-ի իր հայտնի պարբերությամբ՝ Արարատյան դաշտավայրի առավոտի մասին, եւ հարցը, որն ուղղում է՝ «Իսկ ո՞ւր է մարդը», տեղին է հնչեցնել նաեւ այս առումով: Անշուշտ, արտագաղթը ոչ միայն Ղարաբաղի, այլեւ ամբողջ Հայաստանի ծանր խնդիրներից է, նրանում դժվար է մեղադրանքի հասցեներ գտնելը, սակայն ժողովուրդը, որը դարերով ամուր է եղել իր հողի վրա, ժողովուրդը, որը արյուն է թափել իր հողի ազատագրման համար, եւ որի զավակներն այսօր էլ ամուր են պահում Արցախի սահմանը, իրավունք չունի անմշակ թողնելու իր հողը, քանի որ հենց հանուն այդ հողի է մղվել եւ մղվում պայքարը: Սակայն, միեւնույն ժամանակ, ազատ Արցախում անցկացրած մեր մեկ օրը բավական էր հասկանալու՝ ղարաբաղցին որեւէ տագնապ չունի իր վաղվա օրվա հանդեպ, Ղարաբաղի պաշտպան հայ զինվորը՝ իր բարձր կարգապահությամբ եւ մարտական ոգով, վստահ է կանգնած սահմանագծին, Ղարաբաղի բնակչությունը հավատում է իր ղեկավարությանը, ոչ թե ադրբեջանականին, եւ չի ենթարկվում որեւէ սադրանքի: Այս տրամաբանությամբ, վստահ ենք, նոր օրերում ազատ Արցախում չեն լինի այլեւս անմշակ հողեր, որոնք, սակայն, թեկուզ այդպես էլ՝ լի են բազմագույն ծաղիկներով:

ՀՈՎԻԿ ԱՓՅԱՆ
ԼՂՀ-Երեւան

**Հ.Գ.-Ի դեպ, կարելի է նման մի այցելություն էլ կազմակերպել հարեւան Ադրբեջանի լրագրողների համար, որպեսզի վերջիններս համոզվեն՝ իրենց հայրենակիցների գերեզմանոցները Ղարաբաղում անվնաս են, իսկ ի՞նչ եղան հայկական գերեզմանոցները, խաչքարերը, եկեղեցիները Ադրբեջանի շրջափակման մեջ գտնվող Ղարաբաղի հատվածում, Նախիջեւանում, Ադրբեջանի քաղաքներում...**

# Օվալաձեւ դահլիճ որ ունենանք, կոճակսեղմոցի էլ չի՞լինի

*1-ին էջից*

Վիկտոր Դալլաքյանը լրագրողներին ասում էր, թե Մելիք -Ադամյանի դահլիճի պայմանները կարող են էապես բացասաբար ազդել ԱԺ օրինաստեղծ աշխատանքի համար, անգամ թուղթ չեն կարող դնել նեղ սեղանիկին՝ իսկական քննելու դահլիճ է:

ՀՀԿ խմբակցության քարտուղար Էդուարդ Շարմազանովը կիսադատարկ դահլիճի վերաբերյալ ասաց, թե ուզած հարցին կարելի է գալ, մասնակցել քննարկմանը՝ հեռախոս-բան, ընկերներ կան՝ կզանգեն-կկանչեն:

Շենքի պատմությունը լավ էր ազդում Ռուզան Առաքելյանի վրա, ԱԺ փոխնախագահ Արեւիկ Պետրոսյանի համար նախագահության հարթակում որեւէ պրոբլեմ չկա, նորմալ-հանգիստ է: Ռաֆիկ Պետրոսյանի համար դահլիճի ներկա հնարավորություններն ավելի շատ են, քան շատ տարիներ առաջ էր, երբ այս դահլիճում առաջին պառլամենտն էր. բայց դե ներկա ԱԺ-ի հետ համեմատած՝ հնադարյան մեթոդներով մի կերպ կաշխատեն, էլի:

Չնայած դրան՝ ԱԺ-ն իր համար աշխատեց, «Օրինաց երկրի» նոր պատգամավոր Գագիկ Բաղդասարյանը ներկայացվեց, օրենք օրենքի հետեւից էլ հո չէր քննարկվում՝ գործը յուղի պես գնում էր:

Օրինակ՝ երեկ երկրորդ ընթերցմամբ քննարկվեց այն օրենսդրական փաթեթը, որն ապաքրեականացնում է զրպարտանքն ու վիրավորանքը՝ դրանց համար կամ հերքում պարտադրելով կամ դատական կարգով նյութական փոխհատուցում սահմանելով: Ընդ որում փաթեթը բավական լայն քննարկում էր անցել՝ ընդհուպ լսումներ, լրագրողներն ու լրագրողամերձ կազմակերպությունները բավական առաջարկներ էին ներկայացրել, քանի որ այս փաթեթը նաեւ ԶԼՄ-ների շահերին է առնչվում: Արդյունքում սկզբնապես բավական անընդունելի համարվող օրինագիծը քրիստոնեական տեսքի էր բերվել, ինչպես նշում էին եւ օրենքի համահեղինակները եւ ընդդիմախոսները, քանի որ շատ առաջարկներ ներառվել էին օրինագծում: «**Ազգի**» հետ զրույցում օրենսդրական փաթեթի համահեղինակ Հովհաննես Մարգարյանը նկատեց, որ այս փաթեթում գրեթե հիմնականում տեղ են գտել բոլոր այն առաջարկները, որ լրագրողներն ու լրագրողական կազմակերպություններն են արել: Մասնավորապես հնարավորություն է ստեղծվել, որ եթե լրագրողը տվյալ լրատվամիջոցով մարդուն վիրավորել կամ զրպարտել է՝ այդ մարդը եթե դիմում է, հնարավորություն ստեղծվի հերքման համար նույն ծավալով կամ նույն չափի եթերով: Հաջորդն ներառումն այն է, որ ելնելով սուբյեկտի գույքային վիճակից պետք է դատարանը որոշում կայացնի. այսինքն՝ փոխհատուցման սանկցիաները դարձել են մինչեւ 1 եւ 2 մլն՝ 0-ից սկսած. վիրավորանքի համար առավելագույնը մեկ մլն, զրպարտանքի համար՝ առավելագույնը 2 մլն; Բայց մնում է, որ դատարաններն են որոշելու այդ չափը, ահա եւ լավ առիթ դատարաններին՝ զանազան խաղեր տալու: Բայց Հ. Մարգարյանը ճշտեց՝ հերքում տպելուց հետո անձը դատարան չի կարող դիմել: Հնարավորություն է ստեղծվել նաեւ, որ նույնիսկ մահացած անձանց հետ կապված մարդու պատիվն ու արժանապատվությունը վերականգնելու հնարավորություն տրվի՝ նրա մերձավորները կարող են դիմել դատարան, քննարկման առարկա դարձնել վիրավորանքն ու զրպարտանքն իրենց մահացած ազգականի հետ կապված եւ հերքելու հնարավորություն ստանալ:

Ընդհանրապես՝ այս օրենքի առաջնային պլանն այն է, ըստ Հ. Մարգարյանի, որ բարոյական փոխհատուցում տրվի, նյութական փոխհատուցումը երկրորդ պլանում է:

Անգամ «Ժառանգությունն» ի դեմս Լարիսա Ալավերդյանի համարում էր, որ այս նախագիծը հանրային մասնակցության շնորհիվ ավելի նորմալ դարձավ, իսկ պրակտիկան կգա հաստատելու այս նախաձեռնությունը:

Երեկ նաեւ քննարկվեց կառավարության այն նախաձեռնությունը, որով առաջարկվում է մի շարք պաշտոնատար անձանց անձեռնմխելիության իրավունքը սահմանափակել, անգամ որոշ դեպքերում՝ վերացնել: Սա վերաբերում է հատկապես դատախազներին, գլխավոր դատախազին, հատուկ քննչական ծառայության քննիչներին, ընտրական հանձնաժողովների նախագահներին, ՀՀ նախագահի, պատգամավորության, ավագանու անդամի թեկնածուներին:

ՀՆԴԿԱԿԱՆ ՑՈՒՑԱՀԱՆԴԵՍ

# «Best of India» - 4. «Փոքր, բայց կարեւոր ներդրում երկկողմ հարաբերությունների զարգացման մեջ»

**Հայաստանում հնդկական ապրանքների ցուցահանդես-վաճառքի անցկացումը, արդեն կարելի է ասել, դառնում է բարի ավանդույթ:**

**Մայիսի 14-ին, ինչպես միշտ, «Դինամո» մարզադահլիճում, հանդիսավոր պայմաններում՝ ավանդական երաժշտական եւ պարային համարներով բացվեց Best of India տոնավաճառը. այն արդեն թվով չորրորդն է:**

**Հիշեցնենք, որ առաջին նմանատիպ միջոցառումը տեղի ունեցավ 2008թ. սեպտեմբերին, իսկ ահա 2009 թ., հաշվի առնելով դրա հաջողությունը, անցկացվեցին արդեն երկու ցուցահանդես-վաճառք՝ մարտին եւ հոկտեմբերին:**

**Հնդկական կողմից Best of India-ի կազմակերպիչն՝ ՀՀ-ում Հնդկաստանի դեսպանության աջակցությամբ՝ A.N.S. կորպորացիան է, որի նախագահն է Անիլ Մեհթան (Anil Mehta), տնօրեն՝ Նավին Քոհլին (Naveen Kohli) եւ գլխավոր գործադիր տնօրենը (CEO)՝ Սումիթ Սուրին (Sumit Suri), իսկ հայկական կողմից՝ Հայաստանի առեւտրաարդյունաբերական պալատը (ԱԱՊ):**

**Հնդիկ կազմակերպիչների խոսքերով, իրենք «ուրախ են ազդարարելու Best of India վերադարձի մասին՝ նոր գույներով եւ ավելի մեծ ճոխությամբ»:**



**Հայ սպառողը իսկապես սպասում է այս ցուցահանդեսին, քանի որ սա լավ հնարավորություն է ձեռք բերելու «սքանչելի, իսկական եւ բացառիկ» իրեր, այսպիսով ստանալով «հնդկական հպում» իրենց առօրյա կյանքին:**

**«Մեծագույն հաճույք է տեսնել հնդիկների ու հայերի միջեւ այդ շփումներն ու փոխգործակցությունը հնդիկների եւ հայերի միջեւ, ինչը եւս մեկ ապացույցն է երկու ազգերի միջեւ դարավոր փոխադարձ սիրո եւ հարգանքի»:**

**Ավանդական շալեր, վզնոցներ, արծաթե, կիսաթանկարժեք քարերից պատրաստված իրեր, բիժուտերիա, կահույք, կոշկեղեն եւ այլ իրեր կաշվից, ձեռքի աշխատանքներ, բնական նյութերից պատրաստված դիմահարդարանքի պարագաներ, վարագույրներ, թեյ եւ կերակրատեսակներ, եւ էլի բազմաթիվ ապրանքներ՝ շռայլորեն սփռված իսկայական ցուցասրահով մեկ:**

**Ինչպես լրագրողների մի ստվար խմբին ասաց Հայաստանի առեւտրաարդյունաբերական պալատի նախագահի, ԱԺ պատգամավոր Մարտին Սարգսյանը, «ակնհայտ է, որ Best of India-ն որպես այդպիսին կայացել է՝ տարեցտարի աճում է դրա մասնակիցների թիվը, նաեւ՝ ընդլայնվում ապրանքների տեսականին: Ըստ Մ. Սարգսյանի, սա առաջին հերթին բացատրվում է բավականին յուրահատուկ եւ որակյալ ապրանքների գների մատչելիությամբ, նաեւ՝ երկու ժողովուրդների միջեւ հնուց եկող կապերի եւ փոխադարձ հետաքրքրության առկայությամբ:**

**Ավաղ, ապրանքաշրջանառության ծավալները երկու երկրների միջեւ բավարար չեն՝ 2009թ. այդ ցուցանիշը կազմել է 46.3 մլն դոլար, 2008թ.՝ 51.4 մլն դոլար, իսկ 2007թ.՝ 27.4 մլն դոլար:**

**Իր խոսքերով, Best of India-ն ոչ մեծ, սակայն կարեւոր քայլ է Հայաստանի եւ Հնդկաստանի միջեւ առեւտրատնտեսական կապերի զարգացման գործում:**

**Պրն Սարգսյանը տեղեկացրեց լրագրողներին, որ հենց այս նպատակով է, որ իրենք նախատեսում են ս.թ. նոյեմբերին Հնդկաստանում անցկացնել հայկական ապրանքների ցուցահանդես՝ ալկոհոլային խմիչքներ, բնական հյութեր, պահածոներ եւ այլն: (Այստեղ հարկ է ավելացնել, որ հնդիկները մեծ հետաքրքրություն են ցուցաբերում հայկական ծիրանի նկատմամբ, նրանք նույնիսկ արդեն փորձեր են կատարում Հնդկաստանում այն աճեցնելու ուղղությամբ):**

**«Ինչու ո՛չ, մենք սովորելու բաներ ունենք մեր հնդիկ գործընկերներից»,- նշեց Մարտին Սարգսյանը:**

**Իսկ Հայաստանում (նաեւ՝ Վրաստանում) Հնդկաստանի դեսպան Աչալ Մալհոտրան հայ լրագրողներին ասաց հետեւյալը. «Բոլոր այսպիսի միջոցառումները փոխադարձ շահավետ են ե՛ւ հնդիկների, ե՛ւ հայերի համար: Մեր բիզնեսի համար սա լավ հնարավորություն է՝ ներկայացնելու մեր լավագույն ապրանքատեսակները հայկական շուկայում, իսկ հայ գործարարները հնարավորություն են ստանում սերտ կապեր հաստատել իրենց հնդիկ գործընկերների հետ»:**

**Պատասխանելով լրագրողներից մեկի հարցին, թե արդյո՞ք Հնդկաստանում ծանոթ են հայկական ապրանքներին, եւ որո՞նք են այդ երկրում դրանց ներկայացման հեռանկարները, դեսպան Մալհոտրան պատասխանեց (ի դեպ, սահուն ռուսերենով). «Սա հենց այն է, ինչին ներկայումս մենք ձգտում ենք, եւ հենց այս նպատակով է, որ մենք ծրագրել ենք համատեղ ջանքերով հայկական ապրանքատեսակների ցուցահանդես կազմակերպել Հնդկաստանում առաջիկա նոյեմբերին: Հավատում եմ, որ ձեր լեգենդար կոնյակը շատ լավ կվաճառվի իմ երկրում, քանի որ այն շատ սիրված է Հնդկաստանում»:**

**Միաժամանակ ցուցահանդեսը եկամտաբեր է Հայաստանի համար, քանի որ այն նպաստում է երկրում զբոսաշրջության զարգացմանը՝ Հնդկաստանի ավելի քան հարյուր քաղաքացիներ անցկացնում են Հայաստանում մոտ երկու շաբաթ, բացի այդ, տոնավաճառը ժամանակավոր աշխատանքով է ապահովում հայ երիտասարդներին»:**

**Ի դեպ, Մարտին Սարգսյանը նշեց, որ ցուցահանդեսի հնդիկ մասնակիցները վճարել են 100 հազար ԱՄՆ դոլար ՀՀ պետբյուջե՝ մաքսային եւ այլ տուրքերի ձեւով:**

**Մնում է ավելացնել, որ «հնդկական հպում» ստանալ ցանկացողները կարող են այցելել Best of India ցուցահանդես-վաճառքը մինչեւ մայիսի 23-ը, կիրակի օրը:**

ԳՈՒՐԳԵՆ ԽԱՆՋՅԱՆ

AZG NEW PDF.qxd 17/05/2010 21:20 Page 1



## Ազգային

# «Չկա մի երեխա, որին ցեղասպանության օրերին փրկած լինեն հայ լինելու համար»

### *Ասում է Բեշիքչին՝ ավելացնելով. «Դա «փրկություն» չէ, այլ ստրկացման միջոցով երեխայի թուրքացում»*

«**Ազգը**» նախավերջին համարում «Իմ մոր կողմից քուրդ, իսկ հոր՝ թուրք պապերը բնաջնջեցին մի ամբողջ ժողովրդի» վերնագրով անդրադարձել էր **Հասան Բիլդիրիջիի** «Հրաձիգ պապերս» հոդվածին, որը խոստովանության բնույթի հուշագրություն է: Հոդվածում մանկությունը Խլաթում անցկացրած փարիզաբնակ հեղինակը հորից եւ հորեղբայրներից լսածի հիման վրա ոչ միայն շարադրում է հայրենի քաղաքում հայերի սպանության 95 տարվա վաղություն ունեցող վերքերը, այլեւ մանրամասն նկարագրում է սպանության ձեւերն ու վերհիշում մարդասպանների անունները:

Բիլդիրիջիի վկայությամբ, օրինակ, մարդասպանների ոհմակը մզկիթի անկյունում բռնեցնում է հայերից մեկին, որի գլուխը քարով փշրում է շեյխ Շահաբեթդինը, իսկ հաջի Օմերի հայրը խեղդամահ է անում հայկական ընտանիքի բոլոր անդամներին եւ տիրանում նրանց շքեղ ապարանքին: Եթե 1915-ի իրադարձություններից 95 տարի հետո հիշատակվում են մարդասպանների անունները, ապա Թուրքիայի հասարակությունը մասնակցի կարգավիճակով չի կարող անտեղյակ լինել արեւմտահայության բնաջնջումից, ուստի եւ իրազեկման խնդիր ունենալ Հայոց ցեղասպանության մասին:

Ինչ վերաբերում է սպանության միջոցով հայերի ապարանքին կամ առանձնատանը տիրանալու հեղինակի վկայությանը, ապա դա էլ ցույց է տալիս, որ նման առիթի դեպքում մարդասպան թուրք, քուրդ, չերքեզ հրոսակներն անխնա ոչնչացրել են ընտանիքի բոլոր անդամներին, որպեսզի ժառանգորդի գոյությամբ չխաթարվի իրենց անդորրը:

Այլ կերպ, երբ խնդրո առարկա է դառնում հայկական ընտանիքի ապարանքի կամ առանձնատան յուրացումը, որեւէ մեկի կյանքը, թեկուզ նորածնի, չէին խնայում: Այդ դեպքում ինչպե՞ս բացատրել 1915-ի ընթացքում գարշելի թուրք, կիսավայրենի քուրդ եւ արյունարբու չերքեզ ընտանիքներում հայտնվելու պատճառով ցեղասպանությունից փրկված հայ երեխաների գոյությունը, որոնց թիվը չստուգված տվյալներով, մասնավորապես պատրիարքության, ենթադրվում է 300 հազար, կամ ինչո՞վ պայմանավորել երեխաներին խնայելու մարդասպանների «մարդասիրությունը»:

Թեեւ Բիլդիրիջին այս հարցերին չի պատասխանում, սակայն մեջբերելով ծնունդով վանեցի տարեց հայ կնոջ ողբալի պատմությունից մի հատված, որոշակի պատկերացում է տալիս փրկելու նկատառումների մասին: Կինը նրան պատմում է. «Կոտորածի ժամանակ 13 տարեկան սիրունիկ աղջիկ էի: Բոլորին սպանեցին, իսկ ինձ խնայեցին, որ բռնաբարեն ով ասես, մինչեւ Վանա լճից հասա Այնթափ: Չեմ հիշում քանի օր, քանի շաբաթ, քանի ամիս շարունակ...»:

Մարդասպանները թողնելով նրան կենդանի, ոչ միայն հոգացել են իրենց անասնական կարիքը, այլեւ առիթ են ստեղծել մյուս մարդասպաններին, որ նրանք էլ հոգան: Այլ կերպ, խնայել են, որ փչացնեն: Ընդ որում 1915-ին, որպես կանոն, ցեղասպանությունից խուսափել են 7-16 տարեկան երեխաները, մեծապես աղջիկ, իսկ ավելի փոքրերին անխտիր սպանել են հաճախ մոր գրկում, այն նկատառումով, որ փոքրերը լինելով խնամքի կարիքի մեջ, վերցնելու դեպքում չէին կարող ծառայել մահմեդական ընտանիքներին, առավել եւս կատարել հարեմում հարճի կամ տանը աղախնի դեր:

Մահմեդական ընտանիքում հայտնվելը չի կարելի որպես փրկություն դիտարկել, որովհետեւ նախքան երեխային կենդանի թողնելը, նրա ներկայությամբ դաժանաբար սպանել են բոլոր հարազատներին, կամ, ինչպես «Թարաֆի» մարտի 30-ի համարում նշում է պատմաբան Սելիմ Դերինգիլը, մորը բռնաբարելուց հետո կոկորդը կտրել, եթե ոչ՝ գլուխը քարով փշրել են: Նույն թերթի ապրիլի 24-ի համարում **Այշե Հյուրը** վկայում է, որ կենդանի թողնված երեխան ահ ու սարսափով է տեսել, թե ինչպես են կենդանի հողում թաղում իր ծնողներին, եւ վերջինների հոգեվարքից ինչպես է երերում նրանց վրա լցված հողը:

Ակնհայտ է, որ մղձավանջի այս տեսարանները միշտ դրոշմվեին փրկված երեխայի ուղեղում, նրան ցմահ հետապնդեր մարդասպանի ուրվականը, եւ նա մեծանալով, երանի տար սպանվածներին, որ դատապարտված չեն ամեն օր՝ գիշեր-ցերեկ, հանդուրժելու թուրք կամ քուրդ դահիճների գարշելի ներկայությունը:

Հայ երեխայի կյանքը խնայելու թուրքական դրսեւորումների դրդապատճառներն ու դա իբրեւ «մարդասիրություն» դիտարկելու փորձերի բուն էությունը ուսումնասիրության լուրջ թեմա է: Պարզապես ասենք, որ նրանց հետագա թուրքացմամբ կատարվել է «մարդկային մի խմբից մյուսին երեխաների բռնի հանձնում», որը ՄԱԿ-ի Ցեղասպանության կոնվենցիայի 2-րդ հոդվածի համաձայն, նույնպես ցեղասպան գործողություն է:

Հայտնի թուրք սոցիոլոգ **Իսմայիլ Բեշիքչիի** քրդական gelawej.net կայքէջում հրապարակված «Հայոց ցեղասպանությանն առնչվող երկու հիմնարար խնդիր» հոդվածն ուշագրավ է այս ամենի առումով: Նախքան հոդվածի «փրկված» երեխաներին նվիրված հատվածը ներկայացնելը, նշենք, որ Բեշիքչին քրդական հարցի վերաբերյալ 36 գրքերի պատճառով, որոնցից 32-ը արգելված էր Թուրքիայում, 17 տարի ազատազրկվել է, նրա աշխատությունները թարգմանվել են գերմաներեն, իսպաներեն, արաբերեն, պարսկերեն, քրդերեն եւ ճապոներեն:

Ահա թե ինչ է գրել նա.

«Անցած տարիներին ընդգծվում էր միայն հայերի ցեղասպանությունը: Հիմա արդեն հայտնի է, որ Թուրքիայում ցեղասպանության են ենթարկվել նաեւ ասորիները, քաղդեացիները, Պոնտոսի հույներն ու եզդիները: Հենց այդ հարցում էլ, ինչպես թուրքերի, այնպես էլ քրդերի մեջ, ընդունված է ասել. «Կարող են հայերը ենթարկված լինել բռնությունների, սակայն մենք բազմաթիվ հայերի պահել եւ փրկել ենք»: Հարկ է այս արտահայտությունը մի քիչ պարզել:

Փրկվածներն ավելի շուտ երիտասարդ աղջիկներ են եւ փոքրիկ երեխաներ: Ինչպես քրդական, այնպես էլ թուրքական ընտանիքները նրանց մահմեդականացրել են եւ իրենց կարիքները հոգալու համար իբրեւ աղախին կամ ծառա են վերցրել: Որոշ երիտասարդ աղջիկներ մահմեդականություն ընդունելուց հետո նաեւ ամուսնացել են:

Սակայն ո՛չ թուրքերի, ո՛չ էլ քրդերի մեջ չկա մի երեխա, որին պահպանած լինեն հայ լինելու համար կամ ընտանիքի հարկի տակ ընդունեն հարգելով հայերի լեզվական, հոգեւոր եւ մշակութային արժեքները: Չկա նաեւ փրկված գեթ մեկ հայ ընտանիք...

Օրինակ՝ երիտասարդ մի աղջկա աչքի առջեւ սպանում են հորը, մորը, պապիկին, եղբայրներին: Գեղեցիկ լինելու պատճառով նա փրկվում է սպանվելուց: Նրան պահում են, որ բռնաբարեն: Կարող է մահմեդականություն ընդունելուց հետո մեկ ուրիշ աղջիկը տանն իբրեւ աղախին ծառայի, նույնիսկ ամուսնանա հետագայում: Միեւնույնն է, այս գործընթացը չի կարելի «փրկություն» անվանել: Դա սխալ է, որովհետեւ մարդու ներաշխարհն ու ֆիզիկական կառուցվածքը մեկ ամբողջականություն են: Ներաշխարհը ճնշելու միջոցով ֆիզիկական գոյության պահպանումը չի կարելի «փրկություն» անվանել: Ի վերջո նրան պարտադրում են ուրանալ իր հավատքը, մահմեդականություն ընդունել, մոռանալ մայրենի լեզուն եւ թուրքանալ: Նրան օգտագործում են որպես հովիվ, ծառա կամ աղախին: Նա ստրկացվում է: Սա «փրկություն» համարելը ճիշտ չէ, ընդամենը կյանքի դաժան պայմաններին ճարահատյալ հաշտվել է: Հաշտվելու դեպքում, իմ խորին համոզմամբ, կյանքը հազիվ թե իմաստ ունենա: Թերեւս Դերսիմի շրջանում է, որ հայերը, այն էլ որոշակի ժամանակով, կարողացել են պահպանել իրենց կրոնական եւ լեզվական ինքնությունը: Այսպիսի գոյատեւում հնարավոր էր ալավիների շրջանում միայն: Սակայն չեմ կարծում, որ մահմեդականները (սուննի) հայերին այդ բանը թույլ տային: Նրանք հայերի մահմեդականացումը համարել են իրենց հիմնական առաջադրանքը: Թուրքերի, քրդերի եւ հայերի հարաբերություններին անդրադառնալիս չպետք է աչքաթող անել փրկելու, պահպանելու այս հանգամանքը»:

ՀԱԿՈԲ ՉԱՔՐՅԱՆ

---

**ԸՆԴԴԵՄ ՆՈՐԱՄՈՒԾՈՒԹՅԱՆ**

# ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

**Քննարկելով ««Լեզվի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ կատարելու մասին եւ «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքում փոփոխություն եւ լրացում կատարելու մասին ՀՀ օրենքների նախագծերի մասին» արձանագրային նախագիծը, Հայաստանի գրողների միության նախագահությունը հայտնում է իր անհանգստությունը եւ ուշադրություն հրավիրում հետեւյալ հիմնախնդիրների վրա:**

**ՀՀ օրենքներում կատարվելիք յուրաքանչյուր փոփոխություն անշեղորեն պետք է համապատասխանի ՀՀ սահմանադրությամբ ամրագրված դրույթներին: Այնինչ, սույն նախագծի տրամաբանությունը հակասում է ՀՀ գլխավոր օրենքի 12-րդ հոդվածին, որի համաձայն, «ՀՀ պետական լեզուն հայերենն է». այսինքն՝ մեր հանրապետությունում պետականորեն իրականացվող լեզվաքաղաքական բոլոր գործառույթները պարտավոր ենք իրականացնել մայրենի լեզվով:**

**Ներկայացվող նախագիծը հակասում է նաեւ ՀՀ լեզվի մասին օրենքի ընդհանուր գաղափարախոսությանը եւ զանց է առնում կարեւորագույն նախապայմաններ.**

**ա. Լեզվի մասին օրենքի 2-րդ հոդվածի առաջին պարբերությունը՝ «ՀՀ տարածքում գտնվող կրթական եւ ուսումնական համակարգերում դասավանդման եւ դաստիարակության լեզուն գրական հայերենն է», ենթարկվել է ոչ միայն փոփոխության, այլեւ «թյուրիմացաբար» դուրս է մնացել դաստիարակություն բառը, որի հետեւանքով ՀՀ ապագա քաղաքացին կկորցնի հոգեւոր-ազգային դիմագիծը եւ կվերածվի միջին թվաբանական հիբրիդի:**

**բ. Երրորդ պարբերությունը վերաշարադրելով «ՀՀ տարածքում օտար լեզուների խորացված կամ այլ առարկաների օտար լեզուներով ուսուցման ոչ հանրակրթական եւ հանրակրթական ուսումնական հաստատություն կարող է հիմնվել միայն ՀՀ կառավարության համաձայնությամբ կամ մասնակցությամբ» ձեւակերպմամբ, նախագծի հեղինակները դուռ են բացում հանրակրթության ոլորտում օտարալեզու դպրոցների անկառավարելի հարահոսի առջեւ:**

**Հանդիսանալով մեր ազգային եւ մշակութային ինքնագիտակցության հիմնասյունը՝ հայոց լեզուն, կրթական գործառույթներից բացի, կրում է ազգապահպան նշանակություն եւ, նրա դերը սահմանափակելով, նախագիծը ստեղծում է վտանգավոր հեռանկար: Մինչդեռ մեր սերնդի հիշողության մեջ դեռեւս ապրում են այն բազմաթիվ հայորդիները, ովքեր ազգային կրթություն ստանալով Հայաստանի եւ արտերկրի տարբեր կրթօջախներում (Մխիթարյան վարժարան, Ներսիսյան եւ Գեւորգյան ճեմարաններ, Մելգոնյան դպրոց եւ այլն), որոնցում կրթադաստիարակչական բոլոր գործընթացներն իրականացվում էին բացառապես հայերենով, ազատորեն տիրապետում էին մի քանի օտար լեզուների: Այս հանգամանքն ապացուցում է, որ անխաթար պահպանելով կրթական ազգային համակարգը՝ միանգամայն հնարավոր է էապես բարելավել օտար լեզուների ուսուցումը մեր դպրոցներում, ինչը, բնականաբար, հրամայական անհրաժեշտություն է 21-րդ դարի մարտահրավերներին դիմակայող եւ ժամանակի պահանջներին համահունչ սերունդ դաստիարակելու համար:**

**ՀԳՄ նախագահությունը կտրականապես դեմ է ներկայացված նախագծին՝ այն համարելով անհեռատես ու ոչ ընդունելի ազգային-պետական շահերի հայեցակետից եւ առաջարկում է ՀՀ Ազգային ժողովին քննարկման չդնել այդ փաստաթուղթը:**

*ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՐՈՂՆԵՐԻ ՄԻՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅՈՒՆ*

---

# «Օտարալեզու դպրոցների բացումը պարունակում է քաղաքական ենթատեքստ»

**Թեպետ գրող, հրապարակախոս Հակոբ Մովսեսն ընդունում է «Քանի լեզու գիտես՝ այնքան մարդ ես» արտահայտությունը, նաեւ տեղյակ է, որ հայերի նման փոքր ժողովուրդները երկլեզվության մարմաջ ունեն, սակայն մտավախություններ ունի երկրում օտարալեզու դպրոցների բացման կապակցությամբ: Նա**



**համոզված է, որ հայ մտավորականը տգետ կմնա, եթե չինտեգրվի համաշխարհային մշակույթին, քաղաքակրթությանը, միաժամանակ հիշեցնում է Հեգելի խոսքերը. «Եթե մտավորականն իր կրթությունը մայրենի լեզվով չի ստացել, նա տգետ է, մտավորական չէ»: Այս դեպքում հրապարակախոսն առաջարկում է ոսկե միջին՝ ներկայացնելով Հոլանդիայի կրթական համակարգը: Մինչ օտարալեզու դպրոցների վերաբացումն էլ ցանկանում է հստակեցնել՝ նախագծի իրական դրդապատճառները մշակութաբանակա՞ն են, թե՞ քաղաքական:**

**«Մի խուլ վախ կա, խուլ բնազդ, որ այս ամենն արվում է ոչ թե ներքին պահանջներից ելնելով, այլ մի ուրիշ պատճառով եւ պարտադրանքով», ասաց նա «Հայելի» ակումբում: Նա վտանգն այլ տեղ է փնտրում: «Եթե նախագծի հիմքում քաղաքական խնդիր է լուծվում, ապա «մեր հերն անիծվելու է»: Ենթատեքստում ռուսական դպրոցների ակտիվացումն է դրված: Սա ամերիկյան օրիենտալիզմը ռուսականով փոխարինելու կամ մեղմելու պետական քաղաքականության մշակութաբանական դիսցիպլինն է»:**

**Մխիթար Սեբաստացի կրթահամալիրի տնօրեն Աշոտ Բլեյանը կտրականապես դեմ է օտարալեզու դպրոցների բացմանը: Նրա կարծիքով՝ կառավարությունը կրթական բարեփոխումներ իրագործելու փոխարեն կռվեցնում եւ բաժան-բաժան է անում հասարակությանը: «Պետք է նպատակը պարզել», առաջարկում է Բլեյանը՝ օրենքի փոփոխությունները համարելով անընդունելի եւ վիրավորական: «Չեմ կարող հանդուրժել պետության, պետականության եւ հասարակության, իմ երեխաների դեմ ուղղված վտանգը»:**

**Հ. Հ.**

AZG NEW PDF.qxd 17/05/2010 21:20 Page 1



# Սաակաշվիլին Ահմադինեժադին հրավիրում է Թբիլիսի

## Նոր ամերիկյան նախաձեռնությո՞ւն՝ ընդդեմ Մոսկվայի

Որ Թբիլիսին արտաքին քաղաքական որեւէ քայլ դժվար թե ձեռնարկի առանց Վաշինգտոնի «թույլտվության», արդեն վաղուց գաղտնիք չէ: Այս առումով բավական հետաքրքրական է նախագահ Սաակաշվիլու օրերս արած հրավերը Իրանի նախագահ Մահմուդ Ահմադինեժադին՝ ժամանելու Վրաստան: Սաակաշվիլին, ընդունելով Վրաստանում Իրանի նորանշանակ դեսպան Մադջիդ Սաբիրիին, նշել է, որ Ահմադինեժադը կարող է պաշտոնական այցով ժամանել Թբիլիսի «նրա համար հարմար պահի»: Ինչպես տեղեկացնում է իրանական MEHR գործակալությունը, Սաակաշվիլին իրանցի դիվանագետի հետ քննարկել է նաեւ մի շարք հարցեր վրաց-իրանական հարաբերությունների խորացման, վիզային ռեժիմի վերացման հնարավորության վերաբերյալ: Իր հերթին Սաբիրին Սաակաշվիլուն է փոխանցել իր երկրի իշխանությունների ցանկությունը՝ բարելավելու հարաբերությունները Վրաստանի հետ տարբեր ոլորտներում:

«Ռեգնում.ռու» գործակալության «վստահելի աղբյուրներ»-ի փոխանցմամբ՝ Իրանի այս աստիճան պատրաստակամությունը՝ խորացնելու հարաբերությունները Կովկասում ԱՄՆ-ի ամենահավատարիմ «ընկեր» Վրաստանի հետ, պայմանավորված է այն հանգամանքով, որ Թեհրանը հիասթափված է Մոսկվայից, քանի որ վերջինս համաձայնեց պատժամիջոցներ կիրառել Իրանի նկատմամբ եւ կասեցրեց մի շարք համատեղ նախաձեռնությունների ընթացքը: Նույն աղբյուրների վկայությամբ՝ այժմ Իրանը փորձում է բարելավել երկխոսությունը ԱՄՆ-ի հետ՝ մասնավորապես Հարավային Կովկասում տեղի ունեցող գործընթացների շուրջը: Այս առումով Վրաստանն, անշուշտ, կարեւոր կամուրջ կարող է լինել Թեհրանի եւ Վաշինգտոնի միջեւ, որոնց «միությունը» կարող է դառնալ Հարավային Կովկասից Մոսկվայի վտարման պատճառ: Այս առումով կարող է օգտագործվել ինչպես ռուս-վրացական հակամարտության գործոնը, այնպես էլ «բավական բարդ» ղարաբաղյան հարցը: Ինչպես արդեն տեղյակ են մեր ընթերցողները թերթի նախորդ համարներից, Ռուսաստանի նախագահ Մեդվեդեւը Թուրքիա այցելության ընթացքում որեւէ հատկանշական բան չասաց Ղարաբաղի թեմայով, փոխարենը ստորագրվեցին պայմանագրեր, որոնք կոչված են խորացնելու ռուս-թուրքական հարաբերությունները: Այս վերջինն էլ, ըստ «Ռեգնում. ռու»-ի «հավաստի աղբյուրների», օգտագործվելու է «ընդդեմ Մոսկվայի միության» կողմից: Մասնավորապես գործակալությունը նշում է, որ Մոսկվա-Անկարա խորացող հարաբերությունները լուրջ անհանգստացրել են հայկական Սփյուռքին, իսկ Վրաստանի նախագահ Սաակաշվիլին, որը վերջին երեք շաբաթների ընթացքում ԱՄՆ-ում էր, ըստ «Ռեգնում»-ի, ունեցել է մի շարք հանդիպումներ հայկական համայնքի ազդեցիկ ներկայացուցիչների հետ, որոնց հետ քննարկել է Կովկասում ստատուս քվոյի վերականգնումը՝ Մոսկվային տարածաշրջանից վտարելու ճանապարհով, որն էլ, իր հերթին, կբերի ամերիկյան ազդեցության մեծացմանը Հարավային Կովկասում: (Անշուշտ, «Ռեգնում.ռու»-ի այս վերջին պնդումը սադրողական հիմքեր կարող է ունենալ միայն: Սփյուռքահայ «ազդեցիկ ներկայացուցիչներին» ավելի մտահոգում է հայ համայնքի նկատմամբ վրաց իշխանությունների վարած քաղաքականությունը):

Հ. ԱՓՅԱՆ

# Իրանը 3,58 տոկոսանոց ուրանը կփոխանակի միջուկային վառելիքի հետ

**Իրանի կառավարությունը համաձայնել է Թուրքիայի եւ Բրազիլիայի հետ կնքել միջուկային գործարք, որի շրջանակներում իրանական 3,5 տոկոսանոց ուրանը կփոխանակվի գիտական նպատակներով օգտագործվող միջուկային նյութերի հետ:**

**Է իրանական 3,5 տոկոսանոց ուրանը պահպանել Թուրքիայում: Փոխանակումը պետք է իրականացվի Թուրքիայի տարածքում: 3,5 տոկոսանոց ուրանի հանձնումը եւ 20 տոկոսանոցի ստացումը տեղի կունենան միաժամանակ, 10:1 հարաբերակցությամբ: Իրանի ԱԳՆ-ն հայտարարել է, որ գործարքի մասին ՄԱԳԱՏԷ-ն պաշտոնական ծանուցում կստանա մեկ շաբաթվա ընթացքում:**



**Երեկ ստորագրվել է համապատասխան եռակողմ համաձայնագիր, հաղորդում է Ֆրանսպրես գործակալությունը: Մինչ այդ Թուրքիայի վարչապետ Ռեջեփ Թայիփ Էրդողանը եւ Բրազիլիայի նախագահ Լուլա դա Սիլվան մոտ 18 ժամ բանակցել էին իրանցի պաշտոնյաների հետ:**

**RFI ռադիոկայանը, Իրանի ԱԳՆ-ին վկայակոչելով, հաղորդում է, որ իրանցիներն իրենց թեթեւակի հարստացրած 1200 կգ ուրանի դիմաց կստանան ավելի շատ՝ 20 տոկոս հարստացված միջուկային վառելիք, որով կգործի Թեհրանում բժշկական հետազոտությունների համար նախատեսված ռեակտորը:**

**Մասնավորապես նախատեսվում**

**Ուրանի փոխանակման գաղափարը 2009-ի հոկտեմբերին առաջարկել էին ԱՄՆ-ը եւ Եվրոմիությունը, բայց մինչեւ վերջերս Թեհրանից հստակ պատասխան չէին ստացել: Դրական պատասխան ստացվեց Թուրքիայի եւ Բրազիլիայի միջամտությունից հետո միայն: Արեւմուտքն իրանցիներին առաջարկել էր իրանական 3,5 տոկոսանոց ուրանի պաշարները հանձնել Ռուսաստանին եւ Ֆրանսիային, որտեղ դրանք կհարստացվեին եւ Իրանում կօգտագործվեին գիտական նպատակներով:**

# Իսրայելը դժգոհ է Սիրիային «ՄԻԳ-29» օդանավեր վաճառելու Մոսկվայի որոշումից



Իսրայելի արտգործնախարար Ավիգդոր Լիբերմանը քննադատել է Սիրիային նոր սպառազինություն մատակարարելու Ռուսաստանի որոշումը: «Նեզավիսիմայա գազետա» թերթը մեջբերում է Լիբերմանի այն խոսքերը, թե տվյալ քայլը չի նպաստում Մերձավոր Արեւելքում հաշտության մթնոլորտի հաստատմանը:

Ավելի վաղ Իսրայելը հայտարարել է, թե Սիրիա առաքվող ռուսական զենքը կհայտնվի Լիբանանի «Հզբոլլահ» արմատական շարժման գրոհայինների ձեռքին:

Տվյալ դեպքում խոսքը «ՄԻԳ-29» կործանիչների մատակարարման մասին է: Դրանք համարվում են Իսրայելի օդուժի հիմքը կազմող ամերիկյան F-16 ռազմօդանավերի գլխավոր հակառակորդները: Սիրիան կստանա նաեւ «Պանցիր-Ս1» փոքր հեռահարության նորագույն հրթիռահրետանային զենիթային համալիրներ, ուղղաթիռներ եւ հակատանկային հրթիռային համալիրներ:

ՌԴ ռազմատեխնիկական համագործակցության դաշնային ծառայության ղեկավար Միխայիլ Դմիտրիեւի խոսքերով, ռուս-սիրիական համապատասխան պայմանագրերի վրա կատարվող աշխատանքը ներկայումս եզրափակիչ փուլում է:

Իսրայելի պաշտոնական անձինք կասկածի տակ են առնում նման թանկարժեք զինատեսակների դիմաց վճարելու Դամասկոսի կարողությունը: Ռոյթեր գործակալությունը մեջբերում է Իսրայելի կառավարության պաշտոնյաներից մեկի հետեւյալ հայտարարությունը. «Այժմ Սիրիան չի կարող իրեն թույլ տալ նման բարձր տեխնոլոգիական սպառազինությունը. նրա փողերը հազիվ բավականացնում են պարենի ներմուծմանը»:

«Հաարեց» թերթն իր հերթին մատնանշում է իրանական հետքը. «Զինավաճառքի գործարքի հետեւում գտնվող անձինք Թեհրանում են եւ ֆինանսավորում են սիրիացիների ռազմական գնումները: Այդ քայլը կուժեղացնի Իրանի վարչակարգի վերահսկողությունը Դամասկոսի նկատմամբ»:

Դրա հետ մեկտեղ դիտորդները կարծում են, որ օդուժի եւ բարձր տեխնոլոգիական սպառազինությունների ասպարեզում Իսրայելի բացահայտ գերազանցության շնորհիվ Մերձավոր Արեւելքում ռազմավարական զուգակշռությունը դժվար թե խախտվի Սիրիային ռուսական նոր սպառազինությունների մատակարարումից: Սիրիան իր զինանոցում արդեն ունի տասնյակ «Պանցիրներ» եւ «ՄԻԳ-29» տիպի մոտ 50 կործանիչներ:

Միաժամանակ նշվում է, որ Սիրիան չի ստացել ավելի հզոր զինատեսակներ, որոնք կուզենար ունենալ: Դրանք են «ՄԻԳ-31Է» կալանիչները, C-300 զենիթահրթիռային համալիրները եւ «Իսկանդեր» հրթիռները:

Իսրայելի ԱԳՆ ներկայացուցիչները նաեւ նշել են, որ Ռուսաստանը Սիրիային պաշտպանական զենք վաճառելիս ղեկավարվում է նախ եւ առաջ տնտեսական, այլ ոչ թե քաղաքական նկատառումներով: Ուստի Իսրայելը չի կարող Մոսկվայից պահանջել զենք չվաճառել որեւէ երկրի:

# 2010 թ. ԱՄՆ-ի գեղեցկուհին արաբ է



**Լաս Վեգասում ավարտվել է ԱՄՆ-ի գեղեցկության մրցույթի եզրափակիչ փուլը: Հաղթող է հռչակվել 24-ամյա Ռիմա Ֆակիհը, որը ծագումով արաբ է: Այդ մասին հաղորդում է Ասոշիեյթեդ պրես գործակալությունը:**

**Միչիգանի նահանգի ներկայացուցիչ Ֆակիհը լավագույնն է ճանաչվել մրցույթի 50 մասնակիցների մեջ եւ կմասնակցի «Տիեզերքի գեղեցկուհի» մրցույթին: Բացի դրանից, նա իրավունք է ստացել մեկ տարի բնակվելու Նյույորքյան մի հարկաբաժնում եւ անվճար սովորելու Նյու-Յորքի կինոակադեմիայում: Ֆակիհը կունենա նաեւ մի շարք այլ արտոնություններ:**

**Մրցույթում 2-րդ տեղն զբաղեցրել է Վիրջինիայի գեղեցկուհի Սամանթա Էվելին Քեյսին, 3-րդ տեղը՝ Կոլորադոյի ներկայացուցիչ Ջեսիկա Հարտմանը:**

**2009-ին ԱՄՆ-ի գեղեցկուհի էր հռչակվել Հյուսիսային Կարոլինայի ներկայացուցչուհին՝ 22-ամյա շիկահեր Քրիստեն Դալտոնը: Նույն տարվա «Տիեզերքի գեղեցկուհի» մրցույթում նա գրավեց 10-րդ տեղը: Հաղթող ճանաչվեց Վենեսուելայի ներկայացուցչուհի Ստեֆանիա Ֆեռնանդեսը:**

# Մեքսիկական ծոցում նավթի արտահոսքը նվազեցված է

«Բրիթիշ փեթրոլիում» ընկերությանը հաջողվել է Մեքսիկական ծոցում վթարված նավթահորին միացնել 53 սմ տրամագծով խողովակ, որի մեջ հավաքվում է նավթահորից հոսող նավթը, ինչպես նաեւ գազը: Ռոյթեր գործակալությունը հաղորդում է, որ դրանք խողովակով արտամղվում են տանկերի մեջ:

Թեեւ այդ համակարգի միջոցով հաջողվում է միայն մասամբ հավաքել եւ ուղղորդել արտահոսող նավթը, ընկերությունում համակարգի տեղադրումը համարում են «կարեւոր քայլ» մեծ աղետի կանխման ճանապարհին:

Խողովակը վնասված նավթահորին միացրել են ստորջրյա ռոբոտները մի քանի անհաջող փորձերից հետո, նշում է Ռոյթերը:

Ապրիլի վերջերին Մեքսիկական ծոցում «Բրիթիշ փեթրոլիումի» նավթահարթակի պայթյունից եւ խորտակումից հետո սկսվել էր նավթի արտահոսքը: Աղետի հետեւանքով զոհվել էր 11 մարդ: Նավթի մի մասը մնում է ջրի տակ, իսկ մնացած մասը հասել է Լուիզիանայի նահանգի ափերին: Արտակարգ դրություն է հայտարարված ոչ միայն Լուիզիանայում, այլեւ հարեւան Ֆլորիդայում:

Մասնագետների գնահատմամբ, վնասված նավթահորից մինչեւ մայիսի կեսերը արտահոսել է մոտ 60 հազար բարել նավթ: Աղետի պատճառած վնասը գնահատվում է 12 մլրդ դոլար: RFI ռադիոկայանի տվյալներով, բրիտանական ընկերությունն աղետի հետեւանքների մղվող պայքարում արդեն ծախսել է 500 մլն դոլար:

Չնայած ձեռնարկվող բոլոր միջոցառումներին, առայժմ չի հաջողվում լիովին դադարեցնել նավթի արտահոսքը:

# Աֆղանստանում օդանավ է ընկել

**Pamir Airways ավիաընկերության Կունդուզ-Քաբուլ չվերթի օդանավը մայիսի 17-ին առավոտյան չի հասել Աֆղանստանի մայրաքաղաք եւ վայր է ընկել: Այդ մասին հաղորդում է Ֆրանսպրեսը՝ վկայակոչելով երկրի ՆԳՆ հայտարարությունը:**

**Օդանավում կային 38 ուղեւոր եւ անձնակազմի 5 անդամ: Անձնակազմի հետ կապը խզվել է, երբ օդանավը Քաբուլից 30 կմ էր հեռու: Իշխանությունների տվյալներով, ուղեւորների մեջ կան օտարերկրացիներ:**

**Ռոյթեր գործակալությունը նշում է, որ օդանավի անկման հավանական վայրը Սալանգի լեռնանցքի շրջանն է, որը երկրի հյուսիսը կապում է կենտրոնական մասի հետ:**

AZG NEW PDF.qxd 17/05/2010 21:19 Page 1



# Բարսեղ Կանաչյան՝ Կոմիտասի տաղանդաշատ աշակերտն ու երգահանը

Երեկ Բարսեղ Կանաչյանի անվան թիվ 17 արվեստի դպրոցում կազմակերպվել էր համերգ՝ նվիրված Բարսեղ Կանաչյանի ծննդյան 125-ամյակին: Համերգի ընթացքում ելույթ ունեցան դպրոցի սաները եւ ուսուցիչները:

«Վերջերս մեր դպրոցի սաները «Վերածնունդ» միջազգային փառատոնից, որն անցկացվում էր Գյումրիում, վերադարձան 2 ոսկի եւ 2 արծաթե մեդալներով: Մեր այս հաղթանակները նվիրում ենք Բարսեղ Կանաչյանի հիշատակին, որի ծննդյան 125-ամյակը կլրանա մայիսի 21-ին», ասաց թիվ 17 դպրոցի տնօրեն **Արմինե Մուրադյանը**:

Երեւանի Բարսեղ Կանաչյանի անվան դպրոցը հիմնադրվել է 1986 թվականին, նույն թվականին անվանի խմբավար, կոմպոզիտոր, ջութակահար Բ. Կանաչյանի անունով երաժշտական դպրոցներ բացվեցին նաեւ Բեյրութում եւ Հալեպում:

Միջոցառման ժամանակ ողջույնի խոսքով հանդես եկավ «Անահիտ» մշակութային հիմնադրամի նախագահ **Նունե Շամախյանը**. «Հայաստանում Բարսեղ Կանաչյանի անունը հայտնի է դարձրել ջութակահարուհի Անահիտ Ցիցիկյանը, ով առաջին անգամ հանդիպել Բ. Կանաչյանին Բաղդադում, 1963 թվականին, երբ անվանի կոմպոզիտորն արդեն կուրացել էր»:

Նունե Շամախյանն ասաց, որ Բարսեղ Կանաչյանը ոչ մի անգամ չի եղել Հայաստանում, նա ծնվել է Թուրքիայի Ռոդոստո քաղաքում, ապա տեղափոխվել է Պոլիս, որտեղ էլ դարձել է Կոմիտասի աշակերտը:

Բ. Կանաչյանի հայտնի «Օրոր» ստեղծագործությունը կատարեց դպրոցի ուսուցչուհիներից Մարինե Սաղաթելյանը՝ նվագակցությամբ Անահիտ Դիլբարյանի, ելույթ ունեցան նաեւ «Վերածնունդ» փառատոնի դափնեկիրները:

1963-64 թվականներից Անահիտ Ցիցիկյանը տարբեր հոդվածների եւ ռադիոհաղորդումների միջոցով հայ հանրությանը սկսեց ներկայացնել Բարսեղ Կանաչյանին, բայց վերջինիս մասին այդ տարիներին Հայաստանում խոսելն արգելված էր, որովհետեւ Բարսեղ Կանաչյանը դաշնակցական շրջանակից էր: Անահիտ Ցիցիկյանը, սակայն, կարողացավ ապացուցել, որ կարեւորն արվեստագետի քաղաքական պատկանելությունը չէ, այլ նրա արվեստը:

Ի. Պ.

# Ժողովրդական գործիքների պահպանման խնդիրները

Երեկ «Դե ֆակտո» ակումբում՝ լրագրողների հետ հանդիպման ժամանակ Կոմիտասի անվան պետական Կոնսերվատորիայի ազգային նվագարանների եւ հայ երգեցողության ամբիոնի վարիչ, կոմպոզիտոր **Արզաս Ոսկանյանն** ու Ազգային նվագարանների պետական նվագախմբի գեղարվեստական ղեկավար եւ գլխավոր դիրիժոր **Նորայր Դավթյանը** խոսեցին ժողովրդական գործիքների պահպանման եւ դրանց հանդեպ պետական հոգածության մասին:

Արզաս Ոսկանյանի փոխանցմամբ՝ արքունական գործիքների՝ քանի, ուդի, քամանչայի մասով որոշ նահանջ է եղել: Այս գործիքները կենցաղային պայմաններում քիչ են օգտագործվում, ավելի շատ համերգային գործիքներ են, հետեւաբար՝ քիչ եկամտաբեր: 1-2 նվագախմբում քամանչա նվագելով՝ մարդիկ հազիվ թե կարողանան ընտանիք պահել, հետեւապես ազգային նվագարանների հանդեպ հասարակության հետաքրքրությունը գնալով նվազում է:

Նորայր Դավթյանի կարծիքով՝ կարեւոր խթան կարող է լինել պետական կոլեկտիվների աշխատավարձերի բարձրացումը: «Մեր պետական նվագախմբում միջին աշխատավարձը կազմում է 35 հազար դրամ», ասաց նա:

Կոնսերվատորիայում բոլոր մասնագիտությունների գծով, նաեւ ազգային նվագարանների, վճարները 600 հազարական դրամ են, այսինքն՝ ուսանողն ամեն տարի վճարում է 600 հազար դրամ, որպեսզի հետո ստանա ընդամենը 35 հազար դրամ աշխատավարձ: Կոնսերվատորիայում ազգային նվագարանների գծով սովորողները առավելություններ չեն ստանում:

«3 տարի առաջ կառավարությունը որոշում ընդունեց, որ դպրոցներում երեխաները ազգային նվագարաններ պետք է սովորեն պետպատվերով, այսինքն՝ պետությունը նրանց համար վճարում է դպրոցներին, ուստի մենք դեպի Կոնսերվատորիա դեռեւս հույս ենք սպասում»:

Ըստ Արզաս Ոսկանյանի՝ այսօր զգալիորեն հեռացել ենք երաժշտական հայեցի մտածողությունից, որի մեջ իրենց մեղքն ունեն հեռուստաընկերությունները:

«Հեռուստաընկերություններում երաժշտական խմբագիրներ այլեւս չեն աշխատում: Հեռուստատեսությունում պետք է լինեն պրոֆեսիոնալ մասնագետներ, ովքեր նախ եւ առաջ կհամակարգեն երաժշտական հաղորդումները: Հեռուստահաղորդումների 90 տոկոսը, եթե ոչ 100 տոկոսը համեմված են երաժշտությամբ:

Ամեն տարի ազգային երաժշտության գծով Կոնսերվատորիան ավարտում են 2-3 երաժշտագետ, որոնք կարող են աշխատել որպես երաժշտական խմբագիրներ, սակայն հեռուստատեսության դռները նրանց առջեւ փակ են», ասաց Ա. Ոսկանյանը:

Ասել, թե ազգային նվագարանները պրոպագանդելու, ներկայացնելու գործում ոչինչ չի արվում, սխալ կլինի:

«Կազմակերպում ենք համերգ-դասախոսություններ մանկական ֆիլհարմոնիայի շրջանակներում, որի ժամանակ դպրոցականներին ծանոթացնում եմ ազգային գործիքների հետ: 300 երեխայի միջից մեկ էլ տեսար 1-2 հոգի ուզեցին թառ, քամանչա կամ ուդ նվագել», ասաց Նորայր Դավթյանը:

Բանախոսները խոսեցին նաեւ այն գործիքների մասին, որոնք համարվում են արդեն կորցրած գործիքներ:

«Կորցրած գործիք է, օրինակ, բամբիռը: Հիմա այդ անունով ուրիշ գործիք ունենք՝ թավջութակի կամ քյամանի տեսքով, սակայն դա նույն բամբիռը չէ, որը հարվածային գործիք է», ասաց Արզաս Ոսկանյանը:

ԻՆԳԱ ՊԵՏՐՈՍՅԱՆ



# «Վերածնունդ» փառատոնը շարունակություն կունենա

Երեւանի պետական կոնսերվատորիայի Գյումրու մասնաճյուղի ուսանողներ Լալա Մուրադյանը (վոկալ), Հարություն Խաչատրյանը (փողային գործիքներ), Թբիլիսիի կոնսերվատորիայից Եկատերինա Գագնիձեն (դաշնամուր), արցախցի պատանի Կարեն Խաչատրյանը (ժողովրդական երգ), Երեւանի կոնսերվատորիայից Արսեն Միրզոյանը (ժողնվագարաններ) եւ թբիլիսցի Լիզա Ռամաշվիլին (լարային գործիքներ) նշված անվանակարգերում դարձան Գյումրի քաղաքում ավարտված երաժիշտ-կատարողների «Վերածնունդ» միջազգային երկրորդ մրցույթ-փառատոնի մեծ մրցանակների դափնեկիրներ: Նրանց հաջողությունը գնահատելու համար բավական է նշել, որ իննօրյա այս փառատոնին երեք տարիքային խմբերում մասնակցում էին Հայաստանի բոլոր մարզերի, ԼՂՀ-ի եւ 12 այլ երկրների շուրջ 1000 պատանի եւ երիտասարդ կատարողներ, իսկ մասնագիտական մրցութային հանձնախմբերում ընդգրկված էին այդ երկրների մեծ թվով ճանաչված մասնագետներ ու արվեստագետներ: Յուրաքանչյուր անվանակարգում մի քանի տասնյակ մասնակիցներ արժանացան նաեւ առաջին, երկրորդ, երրորդ եւ չորրորդ մրցանակների ու դափնեկրի կոչման, հանձնվեցին նաեւ «Հայ կոմպոզիտորի ստեղծագործության լավագույն կատարող», «Հայ հոգեւոր երգերի լավագույն կատարող», «Հանդիսատեսի համակրանք», «Բեմական հմայք», «Կրտսեր մասնակից» եւ այլ անվանական ու խրախուսական մրցանակներ:

Վարդան Աճեմյանի անվան պետական դրամատիկական թատրոնի դահլիճում տեղի ունեցած հանդիսավոր փակմամբ եւ գալա համերգով ավարտված մշակութային այս խոշոր միջոցառումը, որի մասնագիտական մակարդակի եւ հաջողվածության մասին խոսում էին բոլորը եւ հատկապես՝ այլ երկրներից ժամանած հյուրերը, այս տարի նվիրված էր Հայոց մեծ եղեռնի 95-րդ տարելիցին եւ անցկացվում էր ՅՈՒՆԵՍԿՕ-ի կողմից հայտարարված «Մշակույթների մերձեցման միջազգային տարվա» շրջանակներում: Գարեգին Բ Ամենայն Հայոց կաթողիկոսի օրհնությամբ եւ հանրապետության Առաջին տիկին Ռիտա Սարգսյանի աջակցությամբ կազմակերպված փառատոնի կայացման եւ հաջողության համար շատ բան էին արել ՀՀ մշակույթի, կրթության եւ գիտության նախարարությունները, Մարդկային ռեսուրսների զարգացման «Փյունիկ» համահայկական հիմնադրամը, Երեւանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիան եւ նրա Գյումրու մասնաճյուղը, այլ կազմակերպիչներ ու հովանավոր կազմակերպություններ:

Բացի բուն մրցույթներից, որոնք երիտասարդ նոր անունների հայտնաբերման, մեր երաժշտական կյանքի խթանման լավ միջոց են, այս ոչ առաջին անգամ անցկացվող տոնս ուշադրության գետնում նաեւ միջազգային շփումների ու համագործակցության, մեր արվեստը այլուր ճանաչելի դարձնելու լավ հնարավորություն է: Փառատոնային օրերին անցկացվել է նաեւ «Հայաստանը եւ համաշխարհային մշակույթը» խորագրով միջազգային գիտաժողով, փառատոնի բոլոր օրերը հագեցած են եղել մշակութային, ճանաչողական եւ այլ միջոցառումներով: Կազմակերպվել են Հաղթանակի օրվան, Շուշիի ազատագրման տարելիցին, Ղազարոս Սարյանի ծննդյան 90-ամյակին նվիրված միջոցառումներ, համերգներ, մասնակիցների եւ հյուրերի այցելություններ Գյումրու թանգարաններ, Հառիճի եւ Մարմաշենի միջնադարյան վանքային համալիրներ, Սբ. Էջմիածին, Ցեղասպանության հուշահամալիր...

Ինչպես հայտարարվեց ամփոփիչ մամուլի ասուլիսում, «Վերածնունդ» փառատոնը տարվա ընթացքում իր յուրատեսակ շարունակությունը կունենա: Հայաստանի բոլոր մարզերում, Երեւանում եւ մասնակից երկրներում կկազմակերպվեն հաղթողների համերգները, որոնց կմիանան տվյալ մարզից, քաղաքից կամ երկրից փառատոնի լավագույն մասնակիցները: Լավագույնների առջեւ նաեւ հանդես գալու այլ հնարավորություններ կարող են բացվել, ինչի մասին որոշակի պայմանավորվածություններ արդեն կան, մասնավորապես, Թբիլիսիի, Օդեսայի, Ռիգայի, Վիլնյուսի կոնսերվատորիաների ներկայացուցիչների հետ:

ԳԵՂԱՄ ՄԿՐՏՉՅԱՆ

# «Արարատից Սիոն»-ի համաշխարհային պրեմիերան

Մայիսի 12-ին Մեծ Բրիտանիայում կայացավ «Արարատից Սիոն» վավերագրական ֆիլմի պրեմիերան, որը պատմում է Ավետյաց երկրում հայերի ներկայության պատմության մասին: Բրիտանական ցուցադրումներով կմեկնարկի ֆիլմի համաշխարհային հեռուստատեսային ցուցադրումը Ռուսաստանում, Եվրոպայի երկրներում եւ ԱՄՆ-ում:

Հ. Ա.

# «Նարեկացի» մշակութային միության նոր, գեղեցիկ իրագործումները

Մայրաքաղաքային մշակութասեր հանդիսատեսին վաղուց հարազատացել է «Նարեկացի» մշակութային միությունը, որը 2004-ից հիմնադրվել ու գործում է Նյու Ջերսիում, Երեւանում ու Շուշիում: Իր բազմաբնույթ ծրագրերը՝ բարեգործական հիմունքով, միտված են հայ մշակույթի զարգացմանն ու տարածմանը: Տարիների ընթացքում միության տարբեր նախագծերի հաջող իրագործումը (երաժշտական միջոցառումներ, թատերական ներկայացումներ, ցուցահանդեսներ, գրքերի շնորհանդեսներ, հանդիպում-քննարկումներ, գրքերի, ալբոմների, ձայնային եւ պատկերային խտասալիկների հրատարակություններ եւ այլն) իր շուրջը ձեւավորել են գնահատելի մթնոլորտ, առաջացրել ակտիվ հետաքրքրություն, որի եւս մեկ վկայություններից վերջերս թողարկված երկու՝ «Լույս» եւ «Նարեկացի» DVD-ներն են՝ վերջինը «Նարեկացի» ժողովրդական նվագարանների համույթի ապրիլին կայացած եվրոպական առաջին շրջագայությունից ընդամենը օրեր առաջ լույս ընծայված:




Երկուսն էլ կազմված ու աշխատված են խնամքով, գրավիչ, ճաշակավոր ձեւավորմամբ, պատկերագունային՝ ալբոմների բովանդակությանը համահունչ լուծումներով: Ձայնագրությունների խտասալիկին զուգահեռ ալբոմները պարունակում են նաեւ գրավոր տեքստեր:

«Լույսը» ներկայացնում է համանուն վոկալ հնգյակի՝ հոգեւոր եւ ժողովրդական երգերի կատարումները: Ալբոմը նվիրված է Կոմիտասի ծննդյան 140-ամյակին եւ բացվում է հանճարեղ երաժշտահանի հայտնի խոսքերով. «Երաժշտությունն ամենէն մաքուր հայելին է ցեղին...»: Խտասալիկն ուղեկցող՝ հոգեւոր կյանքին համահունչ գունային՝ բաց-դարչնավուն, մագաղաթագույն ֆոնավորմամբ նույնաձեւ կտրվածքով թղթի տեքստային հատվածը տեղեկություններ է հաղորդում 2003-ից կազմավորված, միայն կանացի ձայներից բաղկացած հնգյակի կատարողական՝ երգացանկի (հայ միջնադարյան հոգեւոր երգեր, հատվածներ Սբ Պատարագի երգեցողությունից, ժող. երգերի, մասնավորապես կոմիտասյան մշակումներ) մասին: «Լույս» ձայնասկավառակը, «Ազգային երաժշտական մրցանակաբաշխություն 2009»-ում արժանացավ տարվա լավագույն՝ «Կոմիտաս-140» մրցանակին, իսկ նույն տարվա դեկտեմբերին Լոս Անջելեսի «Նոկիա» համերգասրահում կայացած Armenian Music Awards-ում՝ «Լավագույն խմբերգային ալբոմ» տիտղոսին, այս նույն մրցանակաբաշխության՝ «Լավագույն դասական ալբոմ» եւ «Լավագույն ձեւավորում» տիտղոսներին արժանացան «Նարեկացի» արվեստի միության «Օբերտոն» եւ «Նահապետ Քուչակ. Հայրեններ» ալբոմները:

Բոլորովին վերջերս թողարկված «Նարեկացի» ժողովրդական նվագարաններ համույթի «Նարեկացի» ալբոմը վերոհիշյալ հրատարակությունների շարքը հարստացնում է մի նոր, ուրույն գույներով: Նույն սկզբունքով կազմված ալբոմը ներկայացնում է համապատասխան ձայնասկավառակը եւ գրքույկը՝ շատ ներդաշնակ ձեւավորումով, գույների ճիշտ բազմազանությամբ եւ հագեցած՝ տեքստային տեղեկություններով: Հայկական ավանդական գործիքների, դրանց հնագույն ծագման, պատմության մասին եւ նոր ժամանակներում այդ նվագարանների ոչ միայն պահպանման, այլեւ երաժշտական ներկա կյանք ակտիվ ներմուծման մասին է Հայկուհի Շամլեանի խոսքը: Ապա եւ տեղեկություններ է տրված «Նարեկացի» արվեստի միության, «Նարեկացի» ժողովրդական նվագարաններ համույթի ստեղծման եւ գործունեության, գեղարվեստական ղեկավար Հովիկ Սահակյանի եւ համույթի երաժիշտների մասին: Գրքույկի սակավ էջերը արդյունավետ եւ խելացի են օգտագործված՝ ուշագրավ են համառոտ, բայց հիմնական տեղեկություններ պարունակող էջերը՝ ներկայում գործածվող նվագարանների (շվի, դուդուկ, թառ, սանթուր, քանոն, դափ...) տարածման, բնորոշ առանձնահատկությունների մասին: Այս ամենը հարստացվում, լրացվում է նվագարանների նկարներով՝ հրաշալի ֆոնավորմամբ:



«Նարեկացի» մշակութային միության այս հրատարակությունները մասնագիտական բարեխնամ եւ ուշադիր աշխատանքի վկայություններ են՝ նրբաճաշակ, ձայնագրության բնույթին համարժեք ձեւավորումներով, պոլիգրաֆիկ վարպետ կատարմամբ:

ՄԵԼԱՆՅԱ ԲԱԴԱԼՅԱՆ

AZG NEW PDF.qxd 17/05/2010 21:56 Page 1



# «Բանանցը» ռեւանշի հասավ




Ֆուտբոլի Հայաստանի բարձրագույն խմբի առաջնության 8-րդ տուրի կենտրոնական հանդիպումը «Բանանցի» եւ «Միկայի» մրցավեճն էր: Այն հետաքրքրական էր մի քանի առումներով: Նախ, առաջնության մեկնարկային տուրում «Բանանցը» 0-4 ջախջախիչ հաշվով պարտվել էր «Միկային», ուստի պետք է ձգտեր ռեւանշի հասնել: Սակայն դա անելն այնքան էլ հեշտ չէր՝ հաշվի առնելով թիմի ֆուտբոլիստների հոգեբանական բարդ իրավիճակը գավաթի եզրափակիչ խաղում «Փյունիկից» 0-4 հաշվով կրած ծանր պարտությունից հետո:

Կար եւս մեկ հանգամանք: «Միկան» թեեւ որոշ չափով խաղային անկում է ապրում, սակայն վերջին 5 հանդիպումներում դարպասն անառիկ էր պահել: Թիմի լիտվացի դարպասապահ Սաուլիուս Կլեւինսկասը 480 րոպե շարունակ դարպասն ամուր փակի տակ էր առել: Բայց մյուս կողմից էլ, «Բանանցն» այսօր աչքի է ընկնում արդյունավետ խաղով: Այնպես որ հանդիպում էին առաջնության ամենաարդյունավետ թիմերից մեկն ու ամենահուսալի պաշտպանությամբ աչքի ընկնող ակումբներից մեկը:

Առաջին խաղակեսն աչքի չընկավ գոլային պահերով: Խաղադաշտում համառ պայքար էր ընթանում, բայց ֆուտբոլիստներին չէր հաջողվում լուրջ գոլային պահեր ստեղծել: Առաջինը վտանգավոր պահ ստեղծվեց «Միկայի» դարպասին, սակայն Սամվել Մելքոնյանի հարվածը թույլ էր եւ դարպասապահը որսաց գնդակը: Բրազիլացի Ժունիորն էլ մենմենակ դուրս գալով դարպասապահի դիմաց, չկարողացավ հաղթող դուրս գալ Ստեփան Ղազարյանի հետ պայքարում:

Երկրորդ խաղակեսն անցավ ավելի հետաքրքրական պայքարում: Դրա «մեղավորը» «Բանանցն» էր, որը զգալիորեն ակտիվացրեց հարձակողական գործողությունները: Եվ շուտով «Բանանցը» հասավ հաջողության: 53-րդ րոպեին անկյունայինի խաղարկումից հետո Սամվել Մելքոնյանի հարվածը հետ մղեց պաշտպանը եւ վրա հասած Էդուարդո դո Սանթոսը գրավեց դարպասը: Բաց թողած գոլից հետո փոխանակ «Միկան» ակտիվանար, «Բանանցը» շարունակեց հարձակողական խաղը: Վտանգավոր պահերը հաջորդում էին միմյանց, սակայն «Բանանցին» չէր հաջողվում կրկնապատկել հաշիվը: Երկու անգամ մենմենակ հայտնվելով դարպասապահի դիմաց, աններելիորեն վրիպեցին Վալտեր Պողոսյանն ու Սամվել Մելքոնյանը: Հետո Մելքոնյանի հարվածը դիպավ ձողին: Վերջապես խաղավարտից 10 րոպե առաջ Էդուարդո դո Սանթոսը կրկնապատկեց հաշիվը՝ գեղեցիկ շրջադարձ հարվածով վճռելով խաղի ելքը:

Հանդիպումը ցույց տվեց, որ ծանր պարտությունից հետո «Բանանցը» ուշքի է եկել, իսկ ահա «Միկայի» խաղում անկումը շարունակվում է: Միկացիներն արդեն 2 խաղ չեն կարողանում գոլ խփել:

Ինչպես մեկնարկային տուրում, այս անգամ էլ «Ուլիսը» «չոր» հաշվով հաղթեց «Իմպուլսին»: Ուլիսցիներից աչքի ընկան Վալերի Ալեքսանյանն ու Արտյոմ Ադամյանը: Վերջինս պաշտոնական մրցումներում 90-րդ գոլը խփեց:

Հաջող մեկնարկից հետո վերջին 6 հանդիպումներում ոչ մի կերպ չի հաջողվում միավոր վաստակել «Կիլիկիային»: Եվ ինչպես կիլիկիացիները միավոր վաստակեն, եթե չեն կարողանում գեթ մեկ գոլ խփել: Կապանում էլ «Գանձասարի» հետ խաղում նրանք չկարողացան գրավել մրցակցի դարպասը՝ փոխարենը 3 գնդակ բաց թողնելով: Դաշտի տերերից աչքի ընկան Արտակ Օսեյանը, Սերգեյ Էրզրումյանն ու Արսեն Ավետիսյանը: Վերջինս իրացնելով 11 մ հարվածը, խփեց Հայաստանի առաջնություններում 192-րդ գոլը:

**Մրցաշարային աղյուսակ**

| | Խ | Հ | Ո | Պ | Գ | Մ |
|---|---|---|---|---|---|---|
| 1. Փյունիկ | 8 | 6 | 2 | 0 | 22-5 | 20 |
| 2. Բանանց | 8 | 5 | 2 | 1 | 20-11 | 17 |
| 3. Ուլիս | 8 | 5 | 2 | 1 | 12-3 | 17 |
| 4. Միկա | 8 | 5 | 1 | 2 | 12-6 | 16 |
| 5. Իմպուլս | 8 | 3 | 1 | 4 | 6-12 | 10 |
| 6. Գանձասար | 8 | 2 | 0 | 6 | 7-15 | 6 |
| 7. Կիլիկիա | 8 | 2 | 0 | 6 | 6-16 | 6 |
| 8. Շիրակ | 8 | 0 | 0 | 8 | 4-21 | 0 |

**Ռմբարկուները**

| | | |
|---|---|---|
| Գեւորգ Ղազարյան | «Փյունիկ» | 7 |
| Էդուարդո դո Սանթոս | «Բանանց» | 7 |
| Սամվել Մելքոնյան | «Բանանց» | 5 |
| Ալբերտ Թադեւոսյան | «Փյունիկ» | 4 |
| Մարկոս Պիզելի | «Փյունիկ» | 4 |
| Արսեն Ավետիսյան | «Գանձասար» | 4 |

# Լիակատար հաջողության համար մնում է նվաճել չեմպիոնների գավաթը

**Մյունխենի «Բավարիան» 15-րդ անգամ դարձավ Գերմանիայի գավաթակիր՝ եզրափակիչում 4-0 հաշվով ջախջախելով «Վերդերին»: Հաշիվը 35-րդ րոպեին բացեց Ռոբենը՝ իրացնելով 11 մ հարվածը: Ընդմիջումից հետո Օլիչը, Ռիբերին եւ Շվայնշտայգերը եւս 3 գոլ խփեցին:**

**Մրցակիցները 3-րդ անգամ ուժերը չափեցին գավաթի եզրափակիչում: Առաջինը կայացել էր 1999-ին: Հիմնական եւ լրացուցիչ ժամանակն ավարտվել էր ոչ-ոքի (1-1), իսկ 11 մ հարվածաշարում հաղթել էր «Վերդերը» (5-4): Հաջորդ մրցաշրջանում «Բավարիան» 3-0 հաշվով վստահ ռեւանշ վերցրեց: Եթե «Բավարիային» հաջողվի նաեւ նվաճել չեմպիոնների գավաթը, ապա գերազանց արդյունքով կեզրափակի մրցաշրջանը: Նշենք նաեւ, որ «Բավարիային» 8-րդ անգամ հաջողվեց մեկ մրցաշրջանում նվաճել երկրի չեմպիոնի եւ գավաթակրի տիտղոսները:**

# «Չելսին» կրկնակի հաջողության հասավ



**Լոնդոնի «Չելսին» երկրի չեմպիոնի տիտղոսին ավելացրեց նաեւ Անգլիայի գավաթակրի կոչումը: Վճռորոշ խաղում «Չելսին» 1-0 հաշվով պարտության մատնեց պրեմիեր լիգային հրաժեշտ տված «Պորտսմութին»: Միակ գոլը 59-րդ րոպեին խփեց Դիդյե Դրոգբան: Հաշիվը կարող էին բացել «Պորտսմութի» ֆուտբոլիստները, սակայն Բոատենգը չկարողացավ իրացնել 11 մ հարվածը: Պետր Չեխը հետ մղեց գնդակը: Իսկ խաղի վերջին րոպեին արդեն Լեմփարդը վրիպեց 11 մ նշակետից: «Չելսին» դարձավ Անգլիայի 6-րդ ակումբը, որը 2 տարի անընդմեջ նվաճեց երկրի գավաթը:**

**«Չելսիի» գլխավոր մարզչի պաշտոնում Կառլո Անչելոտիի նորամուտը գերազանց անցավ: Նա թիմին կրկնակի հաջողության հասցրեց: Իսկ «Մանչեսթր Յունայթեդին» բաժին հասավ միայն լիգայի գավաթը:**

# «Բարսելոնի» չեմպիոնական 20-րդ տիտղոսը

Իսպանիայի առաջնությունում չեմպիոնի տիտղոսի համար մղված պայքարն ավարտվեց «Բարսելոնի» օգտին: Ավարտական տուրից առաջ «Բարսելոնն» ընդամենը մեկ միավորով էր գերազանցում «Ռեալին»: Ավարտական խաղում «Բարսելոնը» սեփական հարկի տակ 4-0 հաշվով ջախջախեց հետնապահներից մեկին՝ «Վալյադոլիդին» ու 20-րդ անգամ նվաճեց Իսպանիայի չեմպիոնի տիտղոսը: Այդ խաղում 2 գոլ խփեց Լիոնել Մեսին եւ 34 գնդակով վստահորեն նվաճեց առաջնության լավագույն ռմբարկուի տիտղոսը: Նա 7 գնդակով առաջ անցավ իր մոտակա հետապնդող, Մադրիդի «Ռեալի» հարձակվող Իգուաինից:

Իսկ ահա «Ռեալը» «Մալագայի» հետ արտագնա խաղում հայտնվել էր պարտության վտանգի տակ: Արդեն 9-րդ րոպեին Դուդան առաջ մղեց «Մալագային»: Միայն 48-րդ րոպեին Վան դեր Վարտին հաջողվեց վերականգնել հավասարակշռությունը: Խաղն ավարտվեց ոչ-ոքի: «Ռեալը» վաստակեց 96 միավոր՝ 3-ով հետ մնալով «Բարսելոնից»: Բրոնզե մեդալակիր «Վալենսիան» 25 միավորով հետ մնաց «Ռեալից»:

## ՍԱՄԲՈ

# Մեդալների հարուստ ավարով

**Մինսկում ավարտված սամբոյի Եվրոպայի առաջնությունում Հայաստանի 10 սամբիստներից 6-ն արժանացան մեդալների: Բոլորից հաջող ելույթ ունեցավ Արթուր Դանիելյանը (74 կգ): Նա հաղթեց բոլոր մրցակիցներին եւ հռչակվեց Եվրոպայի չեմպիոն:**

**Մինչեւ 68 կգ քաշային կարգում Վաչիկ Վարդանյանը հասավ եզրափակիչ, որտեղ զիջելով մրցակցին, արժանացավ արծաթե մեդալի: Բրոնզե մեդալներ նվաճեցին Ռուզաննա Սարգսյանը (48 կգ), Տիգրան Կիրակոսյանը (52 կգ), Վահան Վարդանյանը (57 կգ) եւ Արտակ Ծատինյանը (90 կգ):**

# Վարուժան Հակոբյանը հաջող է մեկնարկել

**ԱՄՆ-ում բնակվող Վարուժան Հակոբյանը հաջող է մեկնարկել այդ երկրի շախմատի առաջնությունում՝ 3 հնարավորից վաստակելով 2,5 միավոր: Նա Հիկարու Նակամուրայի, Գատա Կամսկու, Ալեքսանդր Օնիշչուկի հետ գլխավորում է աղյուսակը: Մեկնարկային տուրում Հակոբյանը ոչ-ոքի խաղաց Բենջամին Ֆինեգոլդի հետ, ապա հաղթեց Ջես Կրային ու Իրինա Կրաշին: 4-րդ տուրում Հակոբյանը կմրցի Գատա Կամսկու հետ:**

**Մելիքսեթ Խաչիյանն ունի մեկ միավոր: Մեկնարկում նա հաղթեց Ալեքս Լենդերմանին, ապա պարտվեց Գատա Կամսկուն եւ Ռոբերտ Հեսին: Մեկ միավոր ունի նաեւ Լեւոն Ալթունյանը, որը հաշտություն է կնքել Սերգեյ Կուդրինի եւ Յուրի Շուլմանի հետ, պարտվել է Ալեքսանդր Ստրիպունսկուն:**

# Սամվել Տեր-Սահակյանն առաջատարների խմբում է



**Ռուսաստանի Կիրիշի քաղաքում ընթացող շախմատի մրցաշարի վերջին տուրերում հաջող ելույթների շնորհիվ Սամվել Տեր-Սահակյանն ընդգրկվեց առաջատարների շարքը: 6-րդ եւ 7-րդ տուրերում Սամվելը հաղթեց Ալեքսանդր Շիմանովին եւ Գրիգորի Օպարինին: Այդ հաղթանակների շնորհիվ հայ շախմատիստը վաստակեց 4,5 միավոր եւ Շալմալի Սետուրամանի հետ բաժանում է 2-3-րդ տեղերը:**

**Միանձնյա առաջատարը Յարոսլավ Ժերեբուխն է, որն ունի 6 միավոր: Նա երկու հաղթանակ տոնեց՝ պարտության մատնելով Իվան Բուկավշինին ու Վլադիմիր Բելոուսին: 4 միավորով 4-6-րդ տեղերն են բաժանում Դանիլ Լինչեւսկին, Վիտալի Բեռնադսկին եւ Վլադիմիր Բելոուսը:**

# Անհաջողությունները շարունակվում են

**Աստրախանում ընթացող շախմատի Գրան պրիի մրցաշարում Վլադիմիր Հակոբյանին ոչ մի կերպ չի հաջողվում կարգավորել խաղը: 5-րդ տուրում հաշտություն կնքելով Վուգար Հաշիմովի հետ, Հակոբյանը պարտվեց Վան Յուեին: 6 տուրից հետո նա 2 միավորով եզրափակում է աղյուսակը: Թեեւ հայ շախմատիստն ի սկզբանե կորցրել է Գրան պրիի ընդհանուր հաշվարկով 2-րդ տեղը գրավելու հնարավորությունը, սակայն դա չի նշանակում, որ նա պետք է իր հնարավորություններից ցածր հանդես գա:**

**Աղյուսակը 4 միավորով գլխավորում է Էռնեստո Ինարկիեւը, որը ոչ-ոքի խաղաց Դմիտրի Յակովենկոյի հետ, ապա հաղթեց Բորիս Գելֆանդին: 3,5-ական միավոր ունեն Պետեր Լեկոն, Դմիտրի Յակովենկոն, Վուգար Հաշիմովն ու Պավել Էլյանովը:**

# Մխիթարյանի գոլն էլ չօգնեց «Մետալուրգին»

**Հենրիխ Մխիթարյանին չհաջողվեց Դոնեցկի «Մետալուրգի» կազմում դառնալ Ուկրաինայի գավաթակիր, թեեւ թիմի խփած 2 գոլերից մեկի հեղինակն էր: Սիմֆերոպոլի «Տավրիայի» հետ եզրափակիչ խաղում հաղթողին որոշելու համար հարկ եղավ լրացուցիչ ժամանակ նշանակել: Առաջին խաղակեսում «Տավրիայի» ֆուտբոլիստները 2 անգամ գրավեցին «Մետալուրգի» դարպասը: Ընդմիջումից հետո Մխիթարյանն ու Մարիո Սերժիոն վերականգնեցին հավասարակշռությունը: Գավաթի բախտը վճռվեց 96-րդ րոպեին, երբ Իդախորը գրավեց «Մետալուրգի» դարպասը:**

**Սիմֆերոպոլի «Տավրիայի» վերջին խոշոր հաջողությունը 1994-ին չեմպիոնի տիտղոսի նվաճումն էր: Եվ ահա 16 տարի անց թիմը դարձավ Ուկրաինայի գավաթակիր:**

# Միլիտոյի գոլն «Ինտերին» չեմպիոն դարձրեց

**Միլանի «Ինտերը» 5-րդ տարին անընդմեջ, 18-րդ անգամ նվաճեց Իտալիայի չեմպիոնի տիտղոսը: Ավարտական տուրում «Սիենայի» նկատմամբ «Ինտերի» հաղթանակն ապահովեց Դիեգո Միլիտոյի խփած միակ գնդակը: «Ինտերը» անցկացրած 38 հանդիպումներում վաստակեց 82 միավոր: Ժոզե Մոուրինյուի սաների գլխավոր հակառակորդ «Ռոման» 2 միավորով հետ մնաց չեմպիոնից՝ ավարտական տուրում 2-0 հաշվով հաղթելով «Կյեւոյին»:**

**Բրոնզե մեդալները բաժին հասան «Միլանին», որն ավարտական տուրում 3-0 հաշվով հաղթեց երկրի 27-ակի չեմպիոն «Յուվենտուսին»: «Միլանը» 10 միավորով հետ մնաց «Ռոմայից»: Առաջնության լավագույն ռմբարկու դարձավ «Ուդինեզեի» հարձակվող Դի Նատալեն, որը 29 գոլ խփեց: Նրան 7 գնդակով զիջեց «Ինտերի» հարձակվող Դիեգո Միլիտոն:**

*Էջը պատրաստեց* **ԱՇՈՏ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԸ**

# Փոքր բիզնեսը՝ ականապատված հարկային դաշտում

Հայաստանում բիզնես միջավայրի բարելավումը կառավարության առաջնահերթ խնդիրներից պետք է լինի: Սրա մասին հաճախ եւ շատ է խոսվում, բայց արվածը ոչ միայն քիչ է, այլեւ քիչ արդյունավետ: Կան տարրական խնդիրներ, որոնց լուծումը շատ ավելի հեշտ է եւ չի պահանջում մեծ ծախսեր, բայց դրանք մնում են անլուծելի եւ ժամանակ, նյարդեր եւ ամենակարեւորը՝ միջոցներ խլում գործարարներից, մասնավորապես փոքր բիզնես ունեցողներից:

Որ ձեռնարկություն գրանցելը դեռ երկար է տեւում եւ կատարվում է մի քանի փուլով, մի քանի անգամ փաստել ենք մեր թերթում եւ ընդգծել, որ այստեղ հրատապ է «մեկ պատուհանի» ներդրումը, որտեղից ձեռնարկություն գրանցողը կստանա բոլոր փաստաթղթերը՝ ներառյալ հարկային հաշվեհամարը (ՀՎՀՀ): Ի դեպ, դեռ 2007-ին էկոնոմիկայի նախարար Ներսես Երիցյանը խոստանում էր, որ այդ համակարգը կներդրվի 1-2 տարուց: Արդեն 3-րդ տարին է անցել, բայց այդ խոստումը մնում է խոստում: Ինչեւէ:

Միայն ձեռնարկություն բացելը հեշտացնելը բավարար չէ փոքր բիզնեսի «կյանքը» հեշտացնելու համար: Երբ գործարարը ստեղծում է սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը (ՍՊԸ) կամ անհատ ձեռնարկատեր է (ԱՁ) դառնում, նրան բազմաթիվ «ստորջրյա» խութեր են սպասում, որոնց մասին նա չի էլ պատկերացնում, եւ ոչ ոք նրան չի իրազեկում:

Խոսենք կոնկրետ օրինակներով: Փոքր ընկերություն ստեղծած գործարարը չգիտի եւ չի կարող իմանալ, որ, օրինակ, իրեն անհրաժեշտ է ունենալ դրամարկղային գրքույկ: Նա կարող է լինել օրինակելի եւ պարտաճանաչ հարկատու, ժամանակին վճարել հարկերն ու սոցվճարները, եւ մի օր բացահայտվի, որ նրա նկատմամբ պետք է կիրառվի ... 50 հազար դրամ տուգանք, որովհետեւ նա չունի դրամարկղային գրքույկ: Երեւի դժվար չէ պատկերացնել, թե դա ինչ լուրջ ֆինանսական կորուստ է նոր բիզնես սկսող փոքր ձեռնարկության համար, եւ պետության հանդեպ հավատի ինչ կորուստ կունենա այդ գործարարը, լինելով պարտաճանաչ հարկատու, որին, սակայն, տուգանում են: Հարց է առաջանում, նոր գործունեություն սկսող հարկատուն որտեղի՞ց եւ ինչպե՞ս պետք է իմանար նման գրքույկ ունենալու անհրաժեշտության մասին: Որեւէ պետական կառույց պարտավոր էր նրան այդ մասին տեղեկացնել: Պարզվում է, որ ոչ՝ իմացիր որտեղից ուզում ես, իսկ պետական կառույցի, տվյալ դեպքում՝ հարկային մարմնի խնդիրն առանց ներման հնարավորության միայն տուգանելն է: Սա հաստատ այն չէ, ինչ ասում էր վարչապետ Տիգրան Սարգսյանը՝ պետական ծառայողների կողմից բարձրակարգ ծառայություններ մատուցելուն հասնելու մասին:

Սակայն նոր ստեղծված փոքր ձեռնարկության համար վերոնշյալը միակ ականը չէ ականապատված հարկային դաշտում, որի միջով նա պարտադրված է քայլել: Այդպիսի ականներ շատ կան: Նման մի ական կարող է պայթել, եթե որեւէ հաշվետվություն, դարձյալ անտեղյակության պատճառով ուշացվի: Այդ դեպքում արդեն «ականը» կպայթի 10-20 հազար դրամ տուգանքի տեսքով: Դարձյալ որեւէ նշանակություն չունի, որ տուգանվողը պարտաճանաչ հարկատու է եւ հարկերը չի թաքցնում կամ դրանց վճարումը ուշացնում: Այս դեպքում էլ նորաստեղծ փոքր ձեռնարկությունը, որ դեռ հնարավորություն չունի հաշվապահ ունենալու, ոչ մի տեղից չի կարող իմանալ, թե երբ պետք է ներկայացվեն հարկային հաշվետվությունները: Չենք խոսում տուգանքի տատանվող չափի մասին, որը լայն դաշտ է ստեղծում հարկային մարմնի կողմից տարբերակված մոտեցման կիրառման համար կամ էլ, որ տուգանքը վճարելուց հետո գործարարը դեռ պետք է հավելյալ ժամանակ վատնի ու վճարման անդորրագիրը ներկայացնի հարկային մարմնին:

Իհարկե, բիզնես սկսող անձը պետք է իմանա, որ նա հարկեր պետք է վճարի, հաշվետվություններ ներկայացնի, բայց մասնագիտությամբ իրավաբան կամ հաշվապահ լինել պարտավոր չէ: Իսկ նման հաստիքներ պահելը փոքր բիզնեսին հասու չէ: Հետեւաբար, մինչ փոքր բիզնեսի համար հաշվապահական կենտրոն բացելը, ճիշտ կլիներ ստեղծել իրազեկման համակարգ, որը կբացառեր անտեղյակության պատճառով գործարարի՝ տուգանքի ենթարկվելու հնարավորությունը:

Բավական է, որ հարկային ստորաբաժանումներում ՀՎՀՀ տրամադրելու հետ մեկտեղ, ընկերությանը կամ անհատ ձեռնարկատիրոջը տրամադրեն տվյալ կազմակերպաիրավական ձեւին եւ գործունեության տեսակին առնչվող տեղեկատվություն, թե ինչ ժամկետներում եւ ինչ է անհրաժեշտ ունենալ գործունեությունը սկսելիս, հարկային ինչ հաշվետվություններ եւ երբ պետք է ներկայացվեն, ինչ հարկատեսակներ եւ երբ պետք է վճարվեն: Դա կարելի է անել երկու-երեք տեսակի բուկլետներում կամ անգամ սովորական տպագիր թղթի վրա անհրաժեշտ տեղեկատվությունը տարբերակված ձեւով ներկայացնելով: Ընդամենը այսքանը, եւ առավելագույնը մի քանի հարյուր հազար դրամ ծախսելով՝ բիզնես միջավայրի բարելավման կարեւորագույն խնդիրը կարելի է լուծված համարել:

Իսկ գուցե պետական կառույցների ղեկավարներին ավելի ձեռնտու է, որ մեծ ծախսե՞ր լինեն, իսկ կոնկրետ հարկային մարմնին էլ՝ որ տուգանքներ լինեն, որոնց մի մասն ուղղվում է «համակարգի զարգացմանը» ...

**ԱՐԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ**

# 24 բնակիչ թունավորվել է «էկլերից»

**Վանաձորի ինֆեկցիոն հիվանդանոցից ոստիկանության Գուգարքի բաժնում հաղորդում է ստացվել, որ սննդի թունավորմամբ իրենց մոտ բուժօգնության են դիմել Մրգահովիտ գյուղի բնակիչներ՝ 24-ամյա Ռուզաննա, 27-ամյա Սյուզաննա եւ 14-ամյա Արշավիր Գեւորգյանները: Նրանք հիվանդանոցում հայտնել են, որ թունավորվել են Վանաձոր քաղաքի Գրիգոր Լուսավորչի թիվ 49 հասցեում գտնվող «Գրին պլազա» մթերային խանութից գնված «էկլեր» թխվածքից: Մեկ ժամ անց նույն հիվանդանոց, աղիքային ինֆեկցիա նախնական ախտորոշմամբ բուժօգնության են դիմել Դարպաս գյուղի բնակիչներ՝ 48-ամյա Անի Կ.-ն, 24-ամյա Տաթեւիկ Ա.-ն, 4-ամյա Աշոտ Պ.-ն, 2-ամյա Անժելիկա Պ.-ն: Մեկնած օպերատիվ խումբը պարզել է, որ նրանք նույնպես թունավորվել են «էկլեր» թխվածք ուտելու հետեւանքով, որը գնել են Վանաձորի մեկ այլ հասցեում գտնվող մթերային խանութից:**

**Կատարվում է նախաքննություն:**

**«Ազգը» առողջապահության նախարարությունից տեղեկացավ, որ ահազանգն ստանալուն պես մասնագետների խումբը մեկնել է Վանաձոր եւ տեղի մասնագետների հետ համաճարակաբանական հետազոտություններ իրականացրել: Ներկայումս Վանաձորի ինֆեկցիոն հիվանդանոցում հոսպիտալացված սննդային տոքսիկաինֆեկցիա ախտորոշմամբ 24 հիվանդ կա: Բոլոր հիվանդների մոտ ի հայտ են եկել նույն ախտանշանները, ինչը բնորոշ է մասնավորապես սալմոնելոզին, որն էլ հաստատվել է բոլոր հիվանդներից վերցված նմուշներում: Ներկա պահին բոլոր հիվանդների վիճակը կայուն է, համաճարակաբանական եւ բուժական աշխատանքները գտնվում են առողջապահության նախարարության անմիջական հսկողության տակ:**

**ՄԱՐԻԵՏԱ ՄԱԿԱՐՅԱՆ**

Երեւանի Ապրանքա-Հումքային Բորսայի հարթակում իրականացվում է ԱրմենՏել ՓԲԸ-ի կողմից ներկայացված մալուխների, մետաղի թափոնի, ինչպես նաեւ ավտոմեքենաների, ռելեների, դիոդների, տրանզիստորների եւ ապրանքանյութական այլ արժեքների աճուրդային վաճառք:

Աճուրդները իրականացվում են յուրաքանչյուր աշխ. օր ժ.11.00 17.00, ք. Երեւան Ազատության 6/1 (5-րդ հարկ) հասցեում: Աճուրդներին մասնակցելու կարգին, ամբողջական ցանկին ծանոթանալու եւ լրացուցիչ տեղեկությունների համար զանգահարել (37410) 565228, նամակագրել info@yercomex.am կամ այցելել **www.borsa.am**

Երեւանի «Ադամանդ» ապրանքա-հումքային բորսայի հարթակում (հասցե՝ք.Երեւան,Ազատության փ. 6/1, 5-րդ հարկ) յուրաքանչյուր աշխատանքային օր ժամը 12.00-17.00 շարունակվում են իրականացվել լուծարվող Ղազանչիի կաթնահամալիրի գույքի հրապարակային սակարկությունները (աճուրդային վաճառքը)՝հետեւյալ կոմբայնների մեկնարկային գների փոփոխությամբ:

| Լոտի N | Լոտի անվանումը | Չափման միավոր | Քանակը | Միավորի մեկնարկային գինը (ներառյալ ԱԱՀ) (դրամ) |
|---|---|---|---|---|
| 39 | Կոմբայն ՍԿ 5,1989թ. | հատ | 1 | 1320000 |
| 40 | Կոմբայն ՍԿ 5,1990թ. | հատ | 1 | 1500000 |
| 41 | Կոմբայն ՍԿ 5,1986թ. | հատ | 1 | 1020000 |

Բոլոր գույքը երկարաժամկետ օգտագործված եւ մեծամասամբ անսարք է:

Գույքը գտնվում է Շիրակի մարզի Ղազանչի գյուղի տարածքում:

Տեղեկությունների համար զանգահարել (010)56-31-15, 091-50-83-22 կամ դիմել Բորսա:

## ԾԱՆՈՒՑՈՒՄ

## Սիրելի՛ հայրենակիցներ

Այս տարի լրանում է Վանի 1915 թվականի Հերոսամարտի 95-ամյակը:

Շնորհիվ այդ ինքնապաշտպանական կռիվների թուրքական յաթաղանից փրկվեց շուրջ 200000 հայ, որոնց մեծ մասը գաղթեց եւ հանգրվանեց Հայաստանի այժմյան տարածքում, ինչը կարեւոր նշանակություն ունեցավ ոչ միայն հայկական գենոֆոնդի պահպանման, այլեւ որոշիչ դեր խաղաց Հայաստանի պետականության կայացման համար: Հայոց պատմության ընթացքում Վանի Հերոսամարտը այն բացառիկներից էր, երբ ողջ ժողովուրդը միակամ էր, ինքնապաշտպանության ընթացքում Վանում առկա էր կուսակցական համերաշխություն: Քաղաքի ողջ բնակչության միասնական պայքարը ղեկավարում էին Արամ Մանուկյանն ու Արմենակ Եկարյանը եւ արդյունքում արձանագրվեց փայլուն հաղթանակ:

Այսօր Վասպուրական պատմական աշխարհից գաղթած, Եղեռնը վերապրած վասպուրականցիների սերունդները միավորված են «Վասպուրական» հայրենակցական միության մեջ: Վասպուրականցիները, Արմենական-ՌԱ կուսակցության հետ համատեղ, **մայիսի 23-ին ժամը 12.00-ին «Արծիվ Վասպուրականի» հուշարձանի մոտ** (Աշտարակից Գյումրի տանող ճանապարհին) նշելու են Վանի Հերոսամարտի տարեդարձը:

Վասպուրականցիների բոլոր ժառանգներին ու մեր հայրենակիցներին հրավիրում ենք մասնակցելու Վանի Հերոսամարտին նվիրված ավանդական այդ դաշտահանդեսին: Ավտոբուսները առավոտյան ժամը 11:00-ին կշարժվեն Հանրապետության հրապարակից:

Մինչ այդ, **մայիսի 22-ին, ժամը 15:00-ին,** Հայֆիլհարմոնիայի «Ա. Բաբաջանյան» դահլիճում տեղի կունենա հանդիսավոր նիստ՝ նվիրված Վանի հերոսամարտի 95-ամյակին: Մուտքը՝ հրավիրատոմսերով:

Մանրամասնությունների համար կարող եք զանգահարել 529583 094 890690 եւ 566845, 091 566845, 077 566845 հեռախոսահամարներով:

***«ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆ» ՀԱՅՐԵՆԱԿՑԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ***

***ԱՐՄԵՆԱԿԱՆ-ՌԱԿ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ***

## Մրցույթի հրավեր 112/10/PRO

ՄԱԿ-ի Զարգացման ծրագրի հայաստանյան գրասենյակը հայտարարում է մրցույթ՝ Երեւանի պետական առեւտրի եւ սպասարկման քոլեջում տպագրական-հրատարակչական կաբինետի ստեղծման համար սարքավորումներ մատակարարելու նպատակով:

Մրցույթի հրավերին մանրամասն կարելի է ծանոթանալ ՄԱԶԾ-ի http://www.undp.am ինտերնետային կայքից կամ գնումների բաժնից Երեւան, Պետրոս Ադամյան 14 հասցեում:

Դիմել Գրիգոր Ախնոյանին՝ հեռ. 56 60 73+126 (ներքին), ժամը 14:00-16:00-ը:

Փաստաթղթերի ներկայացման վերջնաժամկետը՝ ս.թ. հունիսի 01, ժամը 17:00:

## ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ԲԱՑ ՄՐՑՈՒՅԹԻ ՄԱՍԻՆ

### Մրցույթի ծածկագիրը՝ ԼՂ/Դ-1/10

Պատվիրատուն՝ «Հայաստան» համահայկական հիմնադրամը /ք. Երեւան, Կառավարական 3-րդ շենք/, հայտարարում է բաց մրցույթ, որն կանցկացվի է մեկ փուլով:

Մրցույթում հաղթող ճանաչված մասնակցին սահմանված կարգով կառաջարկվի կնքել ԼՂՀ Շուշի քաղաքի Խ.Աբովյանի անվան միջնակարգ դպրոցի վերանորոգման աշխատանքների իրականացման պայմանագիր:

Գնման առարկա է հանդիսանալու ԼՂՀ Շուշի քաղաքի Խ.Աբովյանի անվան միջնակարգ դպրոցի վերանորոգման աշխատանքները:

Մրցույթի հրավեր ստանալու համար անհրաժեշտ է փոխանցել 15.000 դրամ «Հայաստան» համահայկական հիմնադրամի «Կոնվերս Բանկ» ՓԲԸ-ում ունեցած N 1930001437120100 հաշվեհամարին եւ դիմել «Հայաստան» համահայկական հիմնադրամ՝ ս.թ. մայիսի 20-ից մինչեւ ս.թ. հունիսի 15-ը, ժամը 10.00-ից մինչեւ 18.00-ն: (ք. Երեւան, Կառավարական թիվ 3 շենք, 3 սենյակ, Սոս Գեւորգյանին, հեռ. 52-09-40 (ներքին 103)): «Հայաստան» համահայկական հիմնադրամը պարտավորվում է պահանջվող վճարի անդորրագիրը ստանալուց հետո, երկու աշխատանքային օրվա ընթացքում, մրցույթի հրավերը տրամադրել պահանջ ներկայացրած անձին:

Մասնակիցների որակավորման տվյալների՝ մրցույթի հրավերով սահմանված պայմաններին համապատասխանությունը գնահատելու համար, մասնակիցները պետք է պատվիրատուին ներկայացնեն մրցույթի հրավերով նախատեսված փաստաթղթերը: Մրցույթի հայտերը՝ կազմված հայերեն, անհրաժեշտ է ներկայացնել վերոհիշյալ հասցեով՝ մինչեւ ս. թ. հունիսի 17-ը, ժ. 11.00-ը:

*«Հայաստան» համահայկական հիմնադրամ*

## Ամերիկյան դեսպանատունը կազմակերպում է

գրասենյակային ու բնակարանային կահույքի, մեքենաների, համակարգիչների և այլ ապրանքների աճուրդային վաճառք, որը տեղի կունենա մայիսի 22-ին Ամերիկյան փողոց 1 հասցեում ժամը 10-19: Ապրանքները կարող եք զննել տեղում՝ վաճառքին նախորդող ուրբաթ օրը, մայիսի 21-ին ժամը 10-19: Զննումն անվճար է:

Մանրամասն տեղեկությունների համար կարող եք այցելել www.usa.am էջի հայտարարությունների բաժինը:

ԳՈՎԱԶԴԻ ՀԱՄԱՐ ԶԱՆԳԱՀԱՐԵԼ՝ 58-29-60

Լրատուական գործունէութիւն իրականացնող՝ «Ազգ օրաթերթ» ՍՊԸ, Երեւան, Հանրապետութեան 47: Պետական գրանցման վկայականի համարը՝ 02 Ա N 047261, տրուած՝ 17.02.00 թ.:
Թողարկման պատասխանատու, գլխ. խմբ. Յակոբ Աւետիքեան: Տպաքանակ՝ 3000, ստորագրուած է տպագրութեան՝ 17.05.2010, գինը՝ 100 դրամ, տպագրում է «Նոյեան Տապան» ՍՊԸ տպարանում՝ Իսահակեան 28: